# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

42ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 36 (2086) ՇԱԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, 2022
VOLUME 42, NO. 36 (2086) SATURDAY OCTOBER 1, 2022

Պաշտօնաթերթ՝ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


# Երեւանի Մէջ Կայացաւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան 22-րդ Համագումարի Բացումը





Շաբաթ, 24 Սեպտեմբեր 2022-ին, Երեւանի «Անի Փլազա» հիւրանոցին մէջ մեկնարկեց ՍԴՀԿ-ի 22-րդ համագումարը, ներկայութեամբ Կեդրոնական Վարչութեան ատենապետին եւ անդամներուն, կուսակցութեան զանազան շրջաններու Վարիչ մարմիններու անդամներու եւ ներկայացուցիչներու, կուսակցական ընկերներու, Հայաստանի «Հանրապետութիւն» կուսակցութեան նախագահ Արամ Սարգսեանին, «Արդար Հայաստան» կուսակցութեան նախագահ Նորայր Նորիկեանին եւ Հայաստանի Եւրոպական կուսակցութեան ատենապետ Տիգրան Խզմալեանին:

Նախքան համագումարի բացման պաշտօնական արարողութիւնը, դահլիճի մուտքին կատարուեցաւ Հնչակեան կուսակցութեան արխիւներու ցուցահանդէս: Փաստավաւերագրական պաստառներ՝ 135-ամեայ կուսակցութեան պատմութենէն, որոնք բծախնդրօրէն հաւաքուած էին Ընկ. Տոքթ. Եղիկ Ճերեճեանի ջանքերով: Պատկերներով ներկայացուած էր ապստամբութեան խորհրդանշական սկիզբը, հնչակեան հերոսներն ու անոնց սխրագործութիւնները, անոնց քաղաքական գործունէութիւններէն պատառիկներ, անմահ Քսաններու յիշատակի ոգեկոչման աֆիշներ:

Ռոմանոս Մելիքեանի անուան գոլեճի երգչախումբին կատարողութեամբ հնչեցին Հայաստանի եւ Հնչակեան կուսակցութեան քայլերգները:

Բացման խօսքով հանդէս եկաւ ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան անդամ Ընկ. Ալեքսան Քէօշկէրեան: Ան ողջունեց ներկաները եւ նշեց, որ Հնչակեան կուսակցութիւնը 135 տարի շարունակ եղած է ու կը մնայ հայ ժողովուրդի

Շար.ը էջ 6

# ՍԴ Հնչակեան Կուսակցութեան Հանդիպումը Ամերիկայի Դեսպան Լին Թրէյսիի Հետ



Ձախէն աջ՝ Սեւակ Խաչատուրեան, Համբիկ Սարաֆեան, դեսպան Լին Թրէյսի, Վազգէն Խոտանեան, եւ Թալին Քէշիշողլեան

ՍԴՀնչակեան Կուսակցութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը, գլխաւորութեամբ Կեդրոնական Վարչութեան ատենապետ՝ Համբիկ Սարաֆեանի եւ Հայ Ամերիկեան Խորհուրդի անդամներու, հանդիպում ունեցան Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան՝ Լին Թրէյսիի հետ:

Հանդիպումի ընթացքին ՍԴՀԿ ներկայացուցիչները անդրադարձան շրջանային զարգացումներուն, ներկայիս տիրող անվտանգութեան իրավիճակին եւ Հայաստանի սահմաններէն ներս կատարուող յարձակումներուն, Հայաստանի ժողովրդավարական սկզբունքներուն նկատմամբ յանձնառութեան եւ անոնց զարգացման, ինչպէս նաեւ այլ հարցերու, որոնք կարեւոր են Հայութեան՝ Հայրենիքի եւ սփիւռքի տարածքին:

Պատուիրակութեան անդամները շնորհակալութիւն յայտնեցին դեսպանին իր ծառայութեան եւ այն աշխատանքին համար, որ ան կը տանի խթանելու ժողովրդավարութիւնը, մարդու իրաւունքները, Հայաստանի տնտեսական զարգացումը եւ ամրապնդելու Միացեալ Նահանգներ-Հայաստան յարաբերութիւնները տարբեր բնագաւառներէ ներս:

# Մաքրոն. Ֆրանսան Կը Պահանջէ, Որ Ատրպէյճանական Ուժերը Վերադառնան Ելման Դիրքեր



Նախագահ Էմանուէլ Մաքրոն եւ վարչապետ Նիկոլ Փաշինեան կը հանդիպին Էլիզէի պալատէն ներս

Սեպտեմբեր 26-ին, Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի հետ Փարիզի մէջ կայացած հանդիպման ընթացքին Հայաստանի վարչապետը ըսած է, որ Հայաստանի ու Ատրպէյճանի միջեւ սահմանները յստակ չըլլալու պնդումները անհիմն են, քանի որ երկու երկիրները 1991-ի Դեկտեմբեր 8-ին ստորագրած են ԱՊՀ-նստեղծելու համաձայնագիրը, ըստ որուն՝ նախկին Խորհրդային Միութեան հանրապետութիւններու վարչական սահմանները դարձած են պետական սահմաններ, եւ նշած է, որ այդ սահմաններուն վրայ հիմնուած կարելի է երթալ Հայաստանի ու Ատրպէյճանի միջեւ խաղաղութեան համաձայնագրի ստորագրման:

Ֆրանսայի նախագահը իր խօսքին մէջ ըսած է,-«Հաշուի առնելով, որ կան գրաւուած դիրքեր՝ Ֆրանսան պահանջած է, որ ատրպէյճանական ուժերը վերադառնան ելման դիրքեր: Ես Սեպտեմբեր 14-ին ըսած եմ Նախագահ Ալիեւին, որ սահմանի՝ սահմանագծուած չըլլալու փաստը չի կրնար արդարացնել որեւէ յառաջխաղացում միւս երկրի տարածք», ընդգծած է Մաքրոն՝ շարունակելով. «Չլուծուած բոլոր հարցերը, որոնք բազում են, պէտք է բացառապէս լուծուին բանակցութիւններու ճանապարհով: Բանակցութիւնները կը տարուին տարբեր ձեւաչափերով, մասնաւորապէս՝ Եւրոմիութեան հովանիին ներքոյ, եւ պէտք է զանոնք վերսկսիլ»:

«Ես չեմ մոռնար, որ ուղիղ երկու տարի առաջ՝ 2020-ի Սեպ-

Շար.ը էջ 4

**ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ**

## Հայաստանի Նախագահ Վահագն Խաչատուրեանի Ուղերձը



*Յարգելի տիկնայք եւ պարոնայք, Սրտանց շնորհաւորում եմ Ձեզ Սոցիալ Դեմոկրատական Հնչակեան Կուսակցութեան հիմնադրման 135-ամեակի կապակցութեամբ: Հիմնադրման օրուանից ի վեր Հնչակեան կուսակցութիւնն ամենա ակտիւ կերպով ձեռնամուխ եղաւ հայ ազգային, քաղաքական ու հասարակական կեանքի կազմակերպման գործին: Տասնամեակներ շարունակ Հնչակեան կուսակցութիւնն իր հովանու տակ է համախմբել ազգային, պետական գործիչների, ովքեր անմնացորդ կերպով ծառայել են հայրենապահ պանութեանը՝ թէ զէնքով, թէ իրենց կրթամշակութային ու հասարակական-քաղաքական գործունէութեամբ: Ցեղասպանութիւնից յետոյ Հնչակեան կուսակցութիւնն այն առաջատար կառոյցներից էր, որը կարողանում էր կազմակերպել ու կանոնակարգել ամբողջ աշխարհով սփռուած հայութեան համայնքային կեանքը, հիմնում էր դպրոցներ ու մշակութային կեդրոններ՝ մեծապէս նպաստելով Սփիւռքում հայապահպանութեան գործին: Հայաստանի անկախութիւնից յետոյ կուսակցութիւնն անմիջականօրէն ներգրաւուեց մեր պետականութեան կերտման գործին, մշտապէս դրսեւորելով պետականակենտրոն ու սկզբունքային վարքագիծ, իր բոլոր հնարաւորութիւնները ի սպաս դնելով նորանկախ Հայաստանի հզօրացմանն ու կայացմանը: Եւ այսօր էլ Հնչակեանը կուսակցութիւնը անվերապահ ու աներկբայ կանգնած է պետականութեան կողքին: Տիկնայք եւ պարոնայք, Կրկին շնորհաւորում եմ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան անդամներին ու համակիրներին կուսակցութեան 135-ամեակի առթիւ եւ մաղթում եմ յաջողութիւններ եւ ձեռքբերումներ՝ յանուն մեր ընդհանուր ազգա յին նպատակների իրագործման, յանուն հզօր ու զարգացող Հայաստանի:*

## «ՍԴՀԿ-ն Մշտապէս Կարեւոր Դերակատարում Է Ունեցել Համահայկական Նշանակութեան Գործընթացներում». ՀՀ Վարչապետի Ուղերձը



*Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան յարգելի ներկայացուցիչներ, Ջերմօրէն շնորհաւորում եմ ձեզ կուսակցութեան 135-ամեայ յոբելեանի առիթով: Կուսակցութիւնն իր երկարամեայ գործունէութեամբ ծառայել է մեր ժողովրդին եւ Հայրենիքին՝ հանդիսանալով հայութեանը ոգեշնչող, համազգային խնդիրների լուծման կարեւոր կազմակերպութիւններից մէկը: Իրենց ազգանուէր գործունէութեամբ յիշատակման են արժանի կուսակցական այնպիսի անհատներ, մտաւորականներ, ինչպիսիք են՝ Սմբատ Բիւրատը, Մեծն Մուրատը, Ատրպետը: Աւանդական այս կուսակցութիւնը մշտապէս կարեւոր դերակատարում է ունեցել համահայկական նշանակութիւն ունեցող գործընթացներում, իր պատմութեամբ ու անցած ճանապարհով ապացուցել իր կենսունակութիւնը: Բարձր գնահատանքի է արժանի ոչ միայն Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան գործունէութիւնն ու պատմութիւնը, այլ նաեւ նրա դերը Սփիւռքում քաղաքական ու հասարակական կեանքի կազմակերպման մէջ: Մասնաւորապէս, անգնահատելի է կուսակցութեան ներդրումը հայապահպանութեան, Հայաստան-Արցախ-Սփիւռք կապերի ամրապնդման գործում: Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը կարեւորում է ՍԴՀԿ աջակցութիւնն ու զօրակցութիւնը հայութեան եւ Հայաստանի առջեւ ծառացած կարեւոր խնդիրների լուծման, ազգային ինքնութեան եւ լեզուի պահ պանման, Մայր Հայրենիքի հետ կապերի ամրապնդ ման, Հայաս տանի ու Արցախի զարգացման եւ այլ հարցերի լուծման գործում: Եւս մէկ անգամ շնորհաւորելով Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան հիմնադրման 135-ամեայ յոբել եանի առիթով՝ մաղթում եմ կուսակցաշինական բեղմնաւոր ու արգասաբեր գործունէութիւն՝ յանուն Հայաստա նի ժողովրդի եւ ողջ հայութեան:*

## ՍԴՀԿ-ի Պատուիրակութիւնը Կ'այցելէ Եռաբլուր Պանթէոն



ՍԴՀԿ Համագումարի պատուիրակները Եռաբլուրի պանթէոն ներս ծաղկեպսակ կը զետեղեն Հայ ժողովուրդի նահատակներու յիշատակին

*Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան 135-ամեակին առիթով կազմակերպուած միջոցառումներու ծիրէն ներս, Կուսակցութեան համագումարի մասնակիցները, Ուրբաթ, 23 Սեպտեմբեր 2022-ի առաւօտեան այցելեցին Եռաբլուր պանթէոն, գլխաւորութեամբ ՍԴՀԿ Կեդրոնական վարչութեան ատենապետ Ընկ. Տոքթ. Համբիկ Սարաֆեանի:*

*Եռաբլուր պանթէոնը այն սրբավայրն է, ուր հանգրուանած են հայրենիքին համար նահատակուած հերոսները: Իւրաքանչիւր հայու համար Եռաբլուրը սրբատեղի է, ուր այցելելով յարգանքի տուրք կը մատուցէ իրենց կեանքը հայրենիքին սիրոյն զոհած տղոց անմահ յիշատակին:*

*Առ այդ, Հայաստան գտնուող ՍԴՀԿ-ի պատուիրակութիւնը, խումբ մը շարքայիններու ընկերակցութեամբ, ուխտագնացութիւն կատարեցին Եռաբլուր պանթէոն, ուր կուսակցութեան անունով ծաղկեպսակ զետեղելէ ետք, Կեդրոնական վարչութեան ատենապետ Ընկ. Տոքթ. Համբիկ Սարաֆեան խօսք առաւ ու նշեց, որ Եռաբլուրի այս սուրբ վայրին մէջ հանգչող մեր հերոս զինուորներուն շիրիմները կերտած են հայրենիքի նորագոյն պատմութիւնը: Ան շեշտեց, որ «ինչ ալ ըլլան պարագաները, հայրենիքը ՍԴՀԿ-ին համար կը մնայ գերագոյն ե՛ւ նպատակ, ե՛ւ տեսլական, եւ այսօր այստեղ կը գտնուինք այդ հիմնական պատճառով, որովհետեւ հայրենիքն է մեր ուժը, մեր ոգին, հայրենիքն է մեր ապագան, եւ առանց անկախ ու ինքնիշխան հայրենիքի սփիւռքը երկար չի կրնար գոյատեւել»:*

*Ան նշեց, որ իրենք ամէն համագումարէ առաջ այս ուխտագնացութիւնը կը կատարեն, սակայն այսօր բոլորովին տարբեր է պահը, նկատի ունենալով վերջին երկու տարուան դժուարութիւնները, որոնք երբեմն յուսահատութեան կրնան մղել, սակայն մենք չենք ընկրկիր, եւ անոր վառ ապացոյցն է նախորդ շաբթուան ընթացքին տեղի ունեցած ատրպէյճանական յարձակումները, ուր, շնորհիւ մեր զինուորներու քաջարի պայքարին, թշնամին իր արժանի պատասխանը ստացաւ: Ընկ. Սարաֆեան ըսաւ, որ դժբախտաբար այսօր նաեւ հոս պիտի տեսնենք շիրիմները անցեալ շաբաթ զոհուած մեր տղոց, որ կու գան աւելնալու այն հազարներուն, որոնք պայքարած ու հերոսացած են յանուն հայրենիքին:*

*Կեդրոնական Վարչութեան ատենապետը հպարտութիւն յայտնեց կուսակցութեան անցեալով, որովհետեւ «մենք հայ ազատագրական պայքարի, Հայաստանի անկախութեան համար նուիրաբերած ենք մեր ամենահանճարեղ, ամենահզօր զաւակները», ըսաւ ան: Ընկ. Սարաֆեան:*

*Աւարտին, ներկաները միաձայնաբար երգեցին «Տուր ձեռքդ, ընկեր» ուխտերգը:*

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of **the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
*http://www.massisweekly.com*

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**

## ԼՈՒՐԵՐ

## 18 Համայնքի Մէջ Տեղի Ունեցած ՏԻՄ Ընտրութիւններուն «ՔՊ»-Ն Յաղթած է 9-ին

Կիրակի օր Հայաստանի 18 համայնքներուն մէջ համամասնական ընտրակարգով աւագանիի ընտրութիւններ էին, որոնցմէ միայն 9-ին մէջ յաղթած է իշխող «Քաղաքացիական Պայմանագիր»-ը (ՔՊ)՝ Արագածոտնի մարզի Թալին եւ Ծաղկահովիտ համայնքներուն, Լոռիի Գիւլագարակ, Լոռի Բերդ համայնքներուն, Վայոց ձորի Արենիի եւ Եղեգիսի, Կոտայքի Ակունքի եւ Ջրվէժի մէջ, Սիւնիքի Սիսիանի մէջ:

Ընտրութիւններուն ամենաաշխուժը մասնակցած են սահմանային Սիւնիքի մէջ: Սիսիանի մէջ, ուր առաջադրուած 7 ուժերէն յաղթած է «Քաղաքացիական Պայմանագիր»-ը, քուէարկած է ընտրողներուն 55, իսկ Քաջարանի մէջ՝ մօտ 78 տոկոսը, թէեւ Սիսիանի ընտրատեղամասային ընտրական յանձնաժողովներուն մէջ կը նշէին, որ վերջին ռազմական գործողութիւններուն պատճառով քուէարկութիւնը աշխոյժ չէ. «Պատերազմական իրավիճակի պատճառով շատերն են գնացել, այսօր որոշները չեն վերադարձել, որոնք ազդում են նաեւ ընտրութիւններին մասնակցութեան թիւի վրայ»:

Եթէ Սիսիանում յաղթած է «Քաղաքացիական Պայմանագիր»-ը, ապա հարեւան Քաջարանի մէջ առաւելութիւն ունի իշխող կուսակցութեան մրցակիցը՝ «Դէպի Միասնութիւն» դաշինքը, որուն ցուցակը կը գլխաւորէր 2016-էն համայնքը ղեկավարող Մանուէլ Փարամազեանը, որուն նկատմամբ յարուցուած քրէական գործը արդէն մէկ տարի է դատարանն է: Ան կը մեղադրուի 5-6 տարի առաջ պաշտօնէական դիրքը չարաշահելու, պաշտօնէական կեղծիք կատարելու եւ համայնքային գոյքը իւրացնելու մէջ: Անցեալ տարի Փարամազեանը նախ կալանաւորած, ապա ամիսներ անց 70 միլիոն դրամի գրաւով ազատ արձակած էին:

Ուշագրաւ արդիւնքներ արձանագրուած են Տաւուշի Բերդ համայնքին մէջ: Այստեղ յաղթած է «Զօրաւոր Համայնք» դաշինքը, որուն ցուցակը գլխաւորող Յարութիւն Մանուչարեանը մօտ մէկ տարի է կալանաւորուած է համայնքին էական վնաս պատճառելու մեղադրանքով: Ան Բերդի գործող համայնքապետն է 2012 թուականէն: Մանուչարեանի դէմ քրէական գործը եւս դատարանն է:

Ալավերտիի մէջ ալ գործող համայնքապետը հանրապետական է: Ան ու իր խմբակը գոնէ ակնառու չմասնակցեցան քարոզարշաւին եւ չաջակցեցան թեկնածուներէն ոեւէ մէկուն: Հիմնական մրցակիցներու հետ առաջադրուած Հայ Ազգային Գոնկրէս եւ ՀՅ Դաշնակցութիւն կուսակցութիւնները ձայներու 2-ական տոկոս ստացած են:

## Ռուսաստանէն Այս Օրերուն Հայերու Մեծ Հոսք Կայ Դէպի Հայաստան

Ռուսիայէն այս օրերուն հայերու մեծ հոսք կայ դէպի Հայաստան, անոնք խորհրդատուութիւն ստանալու կարիք ունին: Այս մասին Lragir.am-ի հետ զրոյցին ըսաւ «Հայկական Քարիթաս» հասարակական կազմակերպութեան աշխատանքային գաղթի ծրագիրներու փորձագէտ Տաթեւիկ Բեժանեանը՝ նշելով, որ իրեն կը դիմեն տարբեր հարցերով:

«Առաջինը հարցնում են, որ եթէ գան, կարո՞ղ են սահմանը հատել: Անկեղծ ասած, մինչեւ այսօր կարծես թէ խնդիր չկար, բայց այսօր իմացանք, որ արդէն Վրաստանով սահմանը փակ է: Յաջորդ հարցը, որ բարձրացնում են մեր հայրենակիցները, այն է, թէ ինչպէ՞ս կարող են Հայաստանի քաղաքացիութիւն ստանալ: Այսինքն՝ ցանկանում են երկքաղաքացիութիւն ունենալ, այդ դէպքում իրենք հնարաւորութիւն են ունենում ՀՀ քաղաքացու անձնագրով հատել սահմանը: Եթէ սահմանապահները բազաների համադրում չանեն, տուեալները թարմացուած չլինեն, մեր հայրենակիցներն աւելի հեշտ կը կարողանան հայկական անձնագրով դուրս գալ Ռուսաստանից: Այս հարցը ամենաշատը յուզում է զինապարտութեան տարիքի երիտասարդներին: Հարցնում են նաեւ ժամկէտների մասին, եթէ դիմեն՝ ինչքա՞ն ժամանակում կը ստանան քաղաքացիութիւն, արդեօք դրա համար պէտք է գալ Հայաստան, թէ՞ ոչ: Ես այդ խորհրդատուութիւնը տրամադրում եմ իրենց, անհրաժեշտ փաստաթղթերի ցանկն եմ տրամադրում իրենց, այդ տեղեկութիւնը կարող են նաեւ ՌԴ-ում ՀՀ դեսպանատան միջոցով ստանալ», ըսաւ Բեժանեան:

Անոր խօսքով՝ Ռուսիոյ հետ բոլոր երկիրներու սահմաններուն այս օրերուն մեծ թիւով մարդկային կուտակումներ կան: Օդակայաններուն մէջ նոյնպէս մեծ կուտակումներ են, Ռուսիայէն բոլոր ուղղութիւններով օդանաւի տոմսերու գիները կտրուկ աճած են:

## Հայաստանի Տնտեսական Աշխուժութեան Ցուցանիշը 8 Ամսուան Մէջ Աճած է 13.9%

Հայաստանի տնտեսական աշխուժութեան ցուցանիշը 2022 թուականի Յունուար-Օգոստոսին 13.9 տոկոսով աւելցած է նախորդ տարուան նոյն ժամանակահատուածի համեմատ: Այս մասին կը փաստեն ՀՀ Վիճակագրական Կոմիտէի հրապարակած տուեալները:

Արդիւնաբերական արտադրանքի ծաւալը այս տարուան Յունուար-Օգոստոսին նախորդ տարուան նոյն ժամանակահատուածին համեմատ աւելցած է 9.2 տոկոսով:

Շինարարութեան ծաւալը 2022-ի առաջին 8 ամսուան մէջ նախորդ տարուան նոյն ժամանակին համեմատ աւելցած է 14.2 տոկոսով:

Առեւտուրի շրջանառութեան մէջ 2022-ի Յունուար-Օգոստոսին 2021-ի նոյն ժամանակահատուածին նկատմամբ յաւելումը կազմած է 13.6 տոկոս:

Հայաստանի մէջ այս տարուան առաջին 8 ամսուան մէջ մատուցուած ծառայութիւններու ծաւալը նախորդ տարուան նոյն ժամանակահատուածին նկատմամբ աւելցած է 27.1 տոկոսով:

2022 թուականի Յունուար-Օգոստոսին սպառողական գիներու ցուցակը 2021-ի Յունուար-Օգոստոսի համեմատ աճած է 8.4 տոկոսով, արդիւնաբերական արտադրանքի գիներու ցուցակը՝ 5.1 տոկոսով: Ուժանիւթի արտադրութեան ծաւալը Յունուար-Օգոստոսին նախորդ տարուան նոյն ժամանակին համեմատ աւելցած է 16.6 տոկոսով:

Արտաքին առեւտրաշրջանառութեան ծաւալներուն մէջ այս տարի 8 ամսուան մէջ նախորդ տարուան նոյն ժամանակին համեմատ արձանագրուած է 56.2 տոկոս աճ: Ընդ որում՝ 2022 թուականի Յունուար-Օգոստոսին նախորդ տարուան նոյն ժամանակին համեմատ արտահանումը աճած է 52.9 տոկոսով, իսկ ներմուծումը՝ 58.2 տոկոսով:

## Լեւոն Տէր Պետրոսեան Կ'առաջարկէ, Որ Իշխանութիւնն Ու Ընդդիմութիւնը Մէկ Սեղանի Շուրջ Նստին



Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեան

Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեան իշխանութեան ու ընդդիմութեան կ'առաջարկէ մէկ սեղանի շուրջ նստիլ եւ քննարկել՝ ճակատագրական այս իրավիճակին մէջ ինչ կը պահանջուի Հայաստանէն, միջազգային համայնքը ինչ կ'առաջարկէ, եւ հնարաւոր լուծումներէն ընտրել ամենաքիչ ցաւոտը եւ համատեղ որոշում կայացնել:

Ընդ որում, Տէր Պետրոսեանը կը զգուշացնէ, որ առկայ բոլոր առաջարկներն ալ ցաւոտ են Հայաստանի համար:

Նախորդ շաբաթ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ.-ի, Հայաստանի երկրորդ եւ երրորդ նախագահներ Ռոպերթ Քոչարեանի եւ Սերժ Սարգսեանի, Արցախի նախկին երկու նախագահներուն հետ հանդիպումէն յետոյ, Հանրային հեռուստատեսութեան տուած հարցազրոյցին Տէր Պետրոսեան պնդեց, որ ո՛չ ինքը, ո՛չ միւս նախկին նախագահներն ու վեհափառը տեղեկատուութիւն ունեն, թէ ինչ գործընթացներ այս պահին տեղի կ'ունենան, Ատրպէյճանը, Թուրքիան եւ Ռուսիան Հայաստանին ինչ կ'առաջարկեն:

Այդ հարցին պատասխանը, ըստ առաջին նախագահին, ունի միայն վարչապետ Նիկոլ Փաշինեանը եւ գուցէ եւս 2-3 հոգի, հետեւաբար, իշխանութեան եւ ընդդիմութեան միջեւ փոխվստահութեան հետեւանքով պէտք է իրավիճակ ճիշդ պատկերացնել եւ համատեղ լուծումներ գտնել:

«Բոլոր լուծումներն էլ վատ են լինելու մեզ համար: Ես տեսնում եմ խնդիր այդ բոլոր վատ լուծումներից ընտրել ամէնքիչ ցաւալին: Սա է մեր ակնկալիքը, իսկ դա հասկանալու համար, մենք պէտք է տիրապետենք այդ տեղեկութեան, որի միակ տէրը Փաշինեանն է, ուրիշ ոչ ոք: Եւ աւելին ասեմ, դրանից էլ չեմ վախենում՝ Փաշինեանն էլ է վախենում ստորագրել այդ փաստաթուղթը: Ինչ փաստաթուղթ էլ ստորագրի, պիտի ասեն՝ դաւաճան, թուրք, չգիտեմ ինչ:

## Հայկական Զինուժը Սեպտեմբեր 12-16-Ին Առաջին Անգամ Փորձարկած Է Նոր Համակարգ

Տեղեկատուական արհեստագիտութիւններու ոլորտի աղբիւրները կը հաղորդեն, որ Սեպտեմբեր 12-16-ին սահմանային ուղղութիւններէն մէկուն մէջ մարտական պայմաններու մէջ փորձարկուած է հայկական ընկերութեան մշակած մարտի կառավարման իրավիճակային կեդրոնը: Կեդրոնը մարտական կառավարման, իւրային ու թշնամիի ուժերու ուղեկցման եւ դիտարկման, որոշումներու կայացման աջակցման բազմաբաղադրիչ համակարգ է:

Քաղաքագէտ Հրաչեայ Արզումանեան այս կապակցութեամբ կը գրէ

«Քանի որ տեղեկատուութեան արտահոսք է եղել, արժէ «ցանցային հանրութեանը» բացատրել, որ սեպտեմբերեան ռազմական մագլցողական օրերին Հայաստանի սահմաններին տեղի է ունեցել մի իրադարձութիւն, որը, յոյսով եմ, յետադարձ հայեացքով կը գնահատուի որպէս շրջադարձային պահ Հայաստանի զինուած ուժերի հրամանատարութեան եւ կառավարման համակարգի համար:

Առաջին անգամ «Հայաստանի զինուած ուժերի տարածքային պաշտպանութեան եւ պահեստազօրի հրամանատարութիւնը» մարտական գործողութիւններ կազմակերպելու համար օգտագործել է գումարտակի/բրիգադի մակարդակի իրավիճակային գործնական կեդրոնը: Կեդրոնը մշակուել է Հայաստանում եւ հիմնուած է բացառապէս հայկական ընկերութիւնների կողմից ստեղծուած համակարգի, ծրագրային եւ արհեստագիտական միջավայրի վրայ:

«Ցանցային քաղաքացիների» համար, ովքեր մասնագէտ չեն, յաւելեմ, որ աշխարհում շատ քիչ երկրներ կան, որոնք ունեն նման կեդրոններ՝ ԱՄՆ, Բրիտանիա, Ֆրանսա, Իսրայէլ: Օրերս Թուրքիան յայտարարեց իր մշակումների մասին: Այժմ Հայաստանը նոյնպէս կարող է զբաղեցնել իր տեղը, եթէ մենք կարողանանք մարտական պայմաններում փորձարկումից անցնել համակարգի տեղակայմանը: Կան բազմաթիւ կազմակերպչական եւ գործառնական խնդիրներ, ռազմական մշակոյթի խնդիրներ, քանի որ գործողութիւնների իրավիճակային կենտրոնը պահանջում է հեռանալ խորհրդային ռազմական ժառանգութիւնից եւ անցում կատարել 21-րդ դարում պատերազմի»:

## ԼՈՒՐԵՐ

# Փաշինեան ՄԱԿ-Ի Մէջ Քննադատեց Ատրպէյճանը Եւ Որոշ Դաշնակիցներ



Վարչապետ Նիկոլ Փաշինեան ելոյթ կ'ունենայ ՄԱԿԻ ամպիոնէն

*Հայաստանի հանդէպ ատրպէյճանական նոր յարձակման վտանգը չէ նուազած, ՄԱԿ-ի ամպիոնէն զգուշացուց վարչապետ Նիկոլ Փաշինեանը՝ յորդորելով միջազգային համայնքին հասցէական ու լիարժէք աջակցութիւն տրամադրել: Քսան վայրկեաննոց ելոյթին մէջ Հայաստանի վարչապետը խօսեցաւ հիմնականին մէջ Ատրպէյճանի հետ յարաբերութիւններէն, պնդելով, որ Պաքուն մտադիր է Հայաստանէն նորանոր տարածքներ գրաւել:*

*«Ես պաշտօնական եւ հրապարակային հարց եմ ուղղում Ատրպէյճանի նախագահին՝ կարո՞ղ ես ցոյց տալ Հայաստանի այն քարտէզը, որը ճանաչում ես, կամ՝ պատրաստ ես ճանաչել որպէս Հայաստանի Հանրապետութիւն: Ինչո՞ւ եմ սա հարցնում: Որովհետեւ կարող է պարզուել, որ ըստ Ատրպէյճանի պաշտօնական տեսանկիւնի, Հայաստանի միայն կէսը, կամ՝ դրանից էլ քիչն է Հայաստանի Հանրապետութիւն», յայտարարեց Փաշինեան:*

*Խօսելով խաղաղութեան պայմանագրին մասին՝ Նիկոլ Փաշինեան կրկին յայտարարեց, որ պատրաստ է ճանչնալու Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը, եթէ Պաքուն ալ ճանչնայ Հայաստանինը՝ միջազգայնօրէն ընդունուած սահմաններուն մէջ: Օրեր առաջ այս յայտարարութիւնը Փաշինեան հնչեցուցած էր Հայաստանի խորհրդարանին մէջ, նոյնը կրկնեց արդէն միջազգային լսարանին առջեւ:*

*«Եթէ Ատրպէյճանը ճանաչի Հայաստանի տարածքային ամբողջականութիւնը՝ ոչ թէ տեսականօրէն, այլ՝ գործնականում, նկատի ունեմ մեր՝ միջազգայնօրէն ճանաչուած 29 հազար 800 քառակուսի քիլոմեթրի ամբողջականութիւնը, նշանակում է՝ մենք կարող ենք ստորագրել խաղաղութեան համաձայնագիր», ըսաւ վարչապետը:*

*Ելոյթ ունենալով միջազգային ամպիոնէն՝ Փաշինեան ոչ միայն Ատրպէյճանը, այլեւ դաշնակիցները քննադատեց՝ առանց անուններ հնչեցնելու: Մէկ պարագայի ըսաւ, որ իրավիճակը կրնայ սրիլ, քանի որ անվտանգութեան տարածաշրջանային կազմակերպութիւնները պատշաճ չեն արձագանգեր:*

*«Այդ հանգամանքը լրջագոյն հարցեր առաջացրեց հայաստանեան հասարակութեան մէջ», ակնարկեց վարչապետը:*

*«Անցեալ տարի Ատրպէյճանն գրաւել էր Հայաստանի աւելի քան 40 քառակուսի քիլոմեթր տարածք: Դրանից յետոյ, Ատրպէյճանի արդարացումներից մէկն այն էր, որ Հայաստանը, ըստ նրանց, հրաժարւում է սահմանազատման յանձնաժողով ստեղծելուց: Մենք, ի հարկէ, չէինք հրաժարուել դրանից, այլ միայն պնդել էինք, որ միաժամանակ սահմանների անվտանգութեան մեխանիզմ ստեղծուի: Ի վերջոյ, մեր միջազգային գործընկերների խնդրանքով, որոնք պնդում էին, որ սահմանային յանձնաժողովի աշխատանքն ինքնին վստահելի գործօն է լինելու սահմանների անվտանգութեան համար, պայմանաւորուեցինք սկսել աշխատանքները: Եւ հիմա, երբ ձեւաւորուել եւ աշխատում է սահմանների սահմանազատման եւ անվտանգութեան յանձնաժողովը, Ատրպէյճանը նախաձեռնեց յարձակման նոր փուլ: Իսկ այդ միջազգային գործընկերներից ոմանք լռում են», ընդգծեց Հայաստանի վարչապետը:*

*«Հայաստանը պատրաստ է կառուցել ճանապարհ, որը կը գործի Հայաստանի օրէնսդրութեան համաձայն եւ ինքնիշխան վերահսկողութեան ներքոյ», ըսաւ Փաշինեան:*

# Արցախի Նախագահը Մասնակցած է 44-Օրեայ Պատերազմին Նահատակուածներուն Նուիրուած Յիշատակի Միջոցառումներուն



Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեան կ'այցելէ Ստեփանակերտի Ազատամարտիկներու անուան պուրակ

*Արցախի Հանրապետութեան նախագահ Արայիկ Յարութիւնեան Սեպտեմբեր 27-ին խումբ մը բարձրաստիճան պաշտօնեաներու ուղեկցութեամբ այցելած է Ստեփանակերտի Ազատամարտիկներու անուան պուրակ, ուր ծաղիկներ խոնարհած է 44-օրեայ պատերազմին զոհուածներու յիշատակին տեղադրուած յուշատախտակին մօտ:*

*Այնուհետեւ նախագահը հոգեւոր դասին առաջնորդութեամբ Արցախի Հանրապետութեան երրորդ նախագահ Բակօ Սահակեանի, գործադիր եւ օրէնսդիր մարմիններու պատասխանատուներուն հետ մասնակցած է օրուան խորհուրդով կազմակերպուած խաչերթին:*

*Նախագահ Յարութիւնեանը Ստեփանակերտի քաղաքային յուշահամալիրին մէջ ներկայ գտնուած է 44-օրեայ պատերազմին նուիրուած «Լուսոյ Խորան» խորագիրը կրող յուշակոթողի բացման ու օրհնութեան եւ Հայրենիքի պաշտպանութեան համար զոհուած ազատամարտիկներու հոգեհանգստեան կարգերուն, որմէ յետոյ զինուորական պանթէոնին մէջ ծաղիկներ խոնարհած է նահատակուած հերոսներու շիրիմներուն:*

# Նիկոս Տենտիաս. Քարտէզները Վերանայելու Քաղաքականութիւնը Պիտի Ձախողի



Նիկոս Տենտիաս եւ Արարատ Միրզոյեան Երեւանի մէջ կայացած ասուլիսի ընթացքին

*Յունաստանի արտաքին գործերու նախարար Նիկոս Տենտիասը Երեւանի մէջ յստակ ուղերձ ուղարկեց այն երկիրներուն, որոնք կը փորձեն վերասահմանել քարտէզները. վերանայման քաղաքականութիւնը պիտի ձախողի: Տենտիաս այս մասին յայտարարեց ՀՀ արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյանի հետ Երեւանի մէջ կայացած համատեղ մամուլի յայտարարութեան մէջ:*

*«Յունաստանը շատ անգամներ շեշտած է, որ կ'աջակցի բոլոր պետութիւններու ինքնիշխանութեան ու տարածքային ամբողջականութեան, եւ այդ, ի հարկէ, նաեւ կը վերաբերի մեր լաւ ընկեր Հայաստանին: Մենք կը հաւատանք սահմաններու անքակտելիութեան», ըսաւ Տենտիաս:*

*Ան նշեց այն հանգամանքը, որ քանի մը օր առաջ Հայաստանի տարածքը կը ռմբակոծուէր ատրպէյճանական ուժերուն կողմէ: Ան Յունաստանի համերաշխութիւնը յայտնեց Հայաստանի ՀՀ կառավարութեան եւ ժողովուրդին:*

*«Ես պիտի փափաքէի նաեւ յստակ ուղերձ ուղարկել այն երկիրներուն, որոնք կը փորձեն վերասահմանել քարտէզները: Եւ իմ ուղերձս հետեւեալն է՝ վերանայման քաղաքականութիւնները պիտի ձախողին: Ես պիտի նշեմ եւս այդպիսի ուժ մը՝ Թուրքիան, որ կը փորձէ օգտուիլ այս խառն իրավիճակէն, որպէսզի անյարգալից ըլլայ կայունութեան նկատմամբ: Մենք վկայ ենք նաեւ Թրքական հռետորիկայի, թոյլ տուէք ըսել, որ Թուրքիան նաեւ դէմ էր այն բանին, որ Յունաստանը քանի մը պաշտպանական զէնքեր կ'ուղարկէ յունական Լեսպոս կղզի: Եւ այս կը կատարուի այն պայմաններուն մէջ, երբ Յունաստանը կը գործէ իր պարտաւորութիւններու ծիրին մէջ, եւ այս պարտաւորութիւնները կը բխին Լօզանի համաձայնագրէն», ընդգծեց Յունաստանի արտաքին գործերու նախարարը՝ յաւելելով, որ Թուրքիան դէմ է, որովհետեւ Յունաստանը թոյլ չի տար, որ իր տարածքները անպաշտպան մնան:*

*Ըստ անոր՝ Թուրքիան այս պահուն կը սպառնայ պատերազմ սկսիլ Յունաստանի դէմ: Արտաքին գործերու նախարարը ընդգծեց, որ Յունաստանը պատրաստ է եւ կը փափաքի սկսիլ կառուցողական երկխօսութիւն Թուրքիոյ հետ:*

# Ֆրանսան Կը Պահանջէ

Շարունակուած էջ 1-էն

*տեմբեր 27-ին սկսաւ սարսափելի պատերազմ, որ մահաբեր դարձաւ տարածաշրջանին համար: Այն փաստացի յանգեցուց նոր իրավիճակի՝ ընդլայնելով ռուսական բանակին ներկայութիւնը տարածաշրջանին մէջ: Եւ ես խստօրէն կը դատապարտեմ այն, ինչ տեղի ունեցած է վերջին օրերուն, եւ խաղաղութեան ու բնակցութիւնները վերսկսելու կոչ կ'ընեմ», ըսած է Մաքրոն՝ յաւելելով, թէ կը փափաքի ողջունել վարչապետ Փաշինեանի արիութիւնը, որ նոր մօտեցում առաջարկած է տարածաշրջանի ապագային վերաբերեալ:*

*Մաքրոն նշած է, որ Ատրպէյճանի նախագահ Ալիեւ, որուն հետ կը պատրաստուէր մօտակայ ժամերուն զրուցել, նոյնպէս կը փափաքի վերջ դնել տարածաշրջանի անկայունութեան եւ գտնել լուծումներ: «Սակայն անհնարին է կառուցել խաղաղութիւն՝ ուժի գործադրման սպառնալիքի ներքոյ», շեշտած է Մաքրոն եւ նշած է, որ Ֆրանսան ամէն ինչ պիտի ընէ, որպէսզի Հարաւային Կովկասը դառնայ կայուն, յուսալի եւ բարգաւաճ տարածաշրջան:*

*Ֆրանսայի նախագահը յայտնած է, որ Փաշինեանի հետ առանձնազրոյցին անդրադարձ եղած է նաեւ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ յարաբերութիւններու բնականոնացման կարեւոր հարցին: Սա դժուար, բայց շատ անհրաժեշտ գործընթաց է եւ շատ էական է տարածաշրջանին համար, ընդգծած է Ֆրանսայի նախագահը:*

# ՀՀ Նախագահ Վահագն Խաչատուրեան Կ'ընդունի ՍԴՀԿ Պատուիրակութիւնը



Նախագահ Վահագն Խաչատուրեան ՍԴՀԿ Կեդրոնական վարչութեան անդամներուն հետ հանդիպման ընթացքին

Հանրապետութեան Նախագահ Վահագն Խաչատուրեան ընդունած է Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան (ՍԴՀԿ) կեդրոնական վարչութեան անդամները՝ ատենապետ Համբիկ Սարաֆեանի գլխաւորութեամբ: Նախագահ Վահագն Խաչատուրեան ողջունած է հիւրերը եւ բարձր գնահատած է ՍԴՀԿ-ի դերն ու ներդրաւուածութիւնը համազգային նշանակութիւն ունեցող գործընթացներուն մէջ: «Ուժը մենք ենք, դուք էք՝ մենք բոլորս միասին, բոլոր անոնք են, որոնք մտահոգ են մեր պետութեան ապագայով», նշած է Նախագահը: Վահագն Խաչատուրեան անդրադարձած է Հայաստանի դէմ ատրպէյճանական վերջին յարձակման հետեւանքով ստեղծուած իրավիճակին, ան վտանգային խնդիրներուն: Նախագահը անդրադարձ կատարած է նաեւ Ջերմուկ եւ Սիսիան կատարած իր աշխատանքային այցերուն, նշած, որ հայ զինուորին մարտական ոգին բարձր է:

ՍԴՀԿ կեդրոնական վարչութեան ատենապետ Համբիկ Սարաֆեան շնորհակալութիւն յայտնելով ընդունելութեան համար, ներկայացուցած է կուսակցութեան կողմէ իրականացուող ծրագիրները, որոնք պիտի ամփոփուին ՍԴՀԿ համագումարի ծիրին մէջ: «Մեզի համար միշտ առաջնային եղած է հայրենիքի մէջ կայացնել մեր համագումարները: Ամէնէն աւելի մեզի համար առաջնային է մերմիասնականութիւնը, համախմբուածութիւնը երկրին համար դժուարին պահերուն», ըսած է Համբիկ Սարաֆեան՝ յաւելելով, որ պատրաստ են ամէն ինչ ընելու, որպէսզի իրենց ներդրումը ունենան երկրին առջեւ ծառացած խնդիրներու լուծման համար:

Հանդիպման ընթացքին անդրադարձ եղած է նաեւ Արցախի հիմնահարցին, տարածաշրջանային եւ անվտանգային խնդիրներուն:

# Ալէն Սիմոնեան Ընդունած Է ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան Ատենապետին Գլխաւորած Պատուիրակութիւնը



Ազգային Ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան եւ ՍԴՀԿ Կեդրոնական վարչութեան անդամները հանդիպումի ընթացքին

Ազգային Ժողովի Նախագահ Ալէն Սիմոնեան Սեպտեմբեր 23-ին ընդունած է Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան ատենապետ Համբիկ Սարաֆեանի գլխաւորած պատուիրակութիւնը:

ԱԺ Նախագահը շնորհաւորած է Հնչակեան Կուսակցութեան ներկայացուցիչները կուսակցութեան 135-ամեակին առթիւ՝ մաղթելով արգասաբեր գործունէութիւն:

Միտքեր փոխանակուած են Հայաստանին, Սփիւռքին եւ Արցախին առնչուող կենսական նշանակութեան հարցերու շուրջ՝ այս ծիրին մէջ առանձնացնելով քաղաքական ուժերու միասնական գործելու անհրաժեշտութիւնը:

Անդրադարձ եղած է նաեւ ներքաղաքական իրավիճակին վերաբերող հարցերու:

# Արցախի Արտաքին Գործոց Նախարար՝ Դաւիթ Պապայեանի Հանդիպումները Ուաշինկթընի եւ Լոս Անճելոսի Մէջ



Նախարար Դաւիթ Պապայեան Լոս Անճելոսահայ կառոյցներու ներկայացուցիչներու հետ հանդիպումի ընթացքին

Աւելի քան շաբաթէ մը ի վեր Միացեալ Նահանգներ կը գտնուի Արցախի Հանրապետութեան արտաքին գործոց նախարար Դաւիթ Պապայեան՝ հրաւէրովը Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբի: Ան անցեալ Երկուշաբթի գլխաւոր բանախօսն էր գոնկրէսական հաւաքին, որուն ընթացքին ներկաներուն հաւաստիացուց, որ արցախցիները պիտի շարունակեն իրենց պայքարը ի խնդիր ազատութեան եւ տարրական իրաւունքներու ապահովութեան: Պապայեան մասնաւորաբար շեշտեց. «Արցախը երբեք մաս պիտի չի կազմէ Ատրպէյճանին»:

Այս առթիւ Պաքուն դատապարտող ելոյթներով հանդէս եկան գոնկրէսականներ Էտըմ Շիֆ, Ճուտի Ջու, Ճիմ Գոսթա, Տէյվիտ Սիսիլին եւ Ֆրենք Փալոն: Ելոյթներ ունեցան Հայկական Համագումարէն Հերման Բրուտեան եւ Պրայըն Արտունի: Պապայեան ելոյթ ունեցաւ նաեւ Ուտրօ Ուիլսընի տուն թանգարանին մէջ եւ առանձին հանդիպումներ ունեցաւ քոնկրէսականներու հետ:

Հինգշաբթի, Սեպտեմբեր 22ին, Լոս Անճելոսի հայ գաղութի ղեկավարները համախմբուած էին Կլենտէյլի Country Club հաւաքատեղիին մէջ, ներկայ գտնուելու Արցախի արտաքին գործոց նախարար Դաւիթ Պապայեանի ի պատիւ սարքուած ընթրիքին:

Սեղաններու օրհնութեան աղօթքը կատարեց Արցախի Նախկին առաջնորդ Գերշ. Տ. Պարգեւ Արք. Մարտիրոսեան: Սոյն միջոցառումը կազմակերպող Հայաստան Համահայկական Հիմնադրամի անունով ատենապետուհի Մէյրի Միհրանեան, ջերմ խօսքերով բարի գալուստ մաղթեց ներկաներուն, մասնաւորաբար օրուան մեծարեալ Տիար Դաւիթ Պապայեանին, որ իր դիւանագիտական բոլոր լծակներով, կ'աշխատի Արցախի ազատութեան եւ ապահովութեան համար:

Այս առթիւ համապարբակ ելոյթով մը հանդէս Նախարար Դաւիթ Պապայեան: Անդրադառնալով 44 օրուան պատերազմին յաջորդող իրավիճակին ան դրութիւնը նկատեց ահաւոր քանի որ ծանրօրէն տուժած են երկրի գլխաւոր կառոյցներն ու ենթակառոյցները: Վտանգուած է երկրի ապահովութիւնը եւ ատրպէյճանի զինուած ուժերու ստորաբաժանումները յաճախակիօրէն կը խախտեն զինադադարի դրութիւնը ստեղծելով դաժան կացութիւն: Այս իրողութեան ներքեւ ներկայիս Արցախը գոյութենական պայքար կը մղէ Ատրպէյճանի ցեղասպանական վարչակարգին դէմ: Պապայեան վստահեցուց որ արցախցիները պիտի շարունակեն պայքարիլ ազատութեան եւ ապահովութեան համար: Ան կոչ ուղղեց նաեւ սփիւռքի հայութեան որ փոխանակ բաժակաճառեր արտասանելու, գործնական եւ շուտափոյթ աջակցութիւն ցոյց տան թէ քաղաքական եւ թէ նիւթական գետնի վրայ: Օրուան նշանաբանը պէտք է ըլլայ միասնութիւն եւ զօրակցութիւն Արցախին:

Ազատատենչ Արցախի արդար դատին ի նպաստ ելոյթներով հանդէս եկան Մէյրի Միհրանեան (Հիմնադրամ), Ռոպեր Արզումանեան (Ուաշինկթընի մօտ Արցախի ներկայացուցիչ), Աւետիք Իզմիրլեան (Հ.Յ.Դ.), Գաբրիէլ Մոլոյեան (Ս.Դ.Հ.Կ.), իրաւաբան Թալին Եագուպեան (Հ.Բ.Ը.Մ.), Տօքթ. Ռաֆֆի Պալեան (Ռ.Ա.Կ.), Դոկտ. Եղիշէ Կիրակոսեան (իրաւագէտ եւ Նախարարի ուղեկից):

Հաւաքոյթի իր եզրափակիչ խօսքին մէջ հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան շեշտը դրաւ նեցուկ կանգնելու Արցախի ազատատենչ ժողովուրդին որ այս պահին օրհասահական օրեր կ'ապրի երկրի ամենածանր իրավիճակին մէջ: Սրբազանը կոչ ուղղեց որ հայութիւնը իր բոլոր կառոյցներով, ցոյց տայ իր միասնականութիւնը եւ անյապաղ նախաձեռնէ գործնական աջակցութիւններ ցուցաբերելու իր պապենական պատմական հողերուն ամուր կառչած Արցախի ազատատենչ եւ խաղաղասէր ժողովուրդին:

***

Գալիֆոռնիա կատարած իր այցելութիւններու շրջագիծէն ներս Արցախի արտաքին գործոց նախարար Դաւիթ Պապայեան շահեկան հանդիպումներ ունեցաւ գաղութի կարգ մը կազմակերպութիւններու հետ: Ան Սեպտեմբեր 26ին հրապարակային ասուլիսով մը հանդէս եկաւ UCLA համալսարանի «Մոնկ» սրահին մէջ «Արցախի ապագան» նիւթին շուրջ:

Նոյն օրը երեկոյեան Դաւիթ Պապայեան Պըրպէնքի Հայց. Առաքելական եկեղեցւոյ առաջնորդարանին մէջ ելոյթ ունեցաւ «Արցախը այսօր եւ յետայսու» նիւթով կազմակերպուած հանրային հաւաքի ընթացքին:

# Երեւանի Մէջ Կայացաւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան 22-րդ Համագումարի Բացումը

Շարունակուած էջ 1-էն

*կողքին եւ անոր կարմիր դրօշը ներկուած է ազգային ազատագրական պայքարի ուղիներուն վրայ ինկած հազարաւոր նահատակներու արեամբ: Ընկ. Քէօշկէրեան լուսարձակի տակ առաւ, որ Հնչակեան կուսակցութեան գոյութեան, յարատեւութեան եւ արդիականացման կարեւոր գրաւականներէն է երիտասարդներուն մասնակցութիւնը: Արդարեւ, հնչակեան երիտասարդութեան հաւատարմութեան եւ յանձնառութեան խօսքը փոխանցելու համար բեմ հրաւիրեց Ընկ. Տիգրան Միհրանեանը:*



Տիգրան Միհրանեան

*Ընկ. Տիգրան Միհրանեան մեծ պատիւ համարեց հայրենի հողին վրայ մասնակցիլ Հնչակեան կուսակցութեան 22-րդ համագումարին եւ համայն հնչակեան երիտասարդական կազմակերպութիւններուն անունով խօսք փոխանցել: «Որպէս հնչակեան երիտասարդութիւն այսօր ուխտի վերանորոգման օր է. այն ուխտը, որ 135 տարիներ առաջ ուխտեցին մեր հիմնադիրները՝ անշահախնդրօրէն ծառայելու հայ ժողովուրդին եւ հայրենիքին»:*

*Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան խօսքը փոխանցեց Կեդրոնական Վարչութեան ատենապետ Ընկ. Տոքթ. Համբիկ Սարաֆեանը՝ նշելով, որ կուսակցութեան 22-րդ համագումարը կը կայանայ հայրենիքին համար ամենաճակատագրական ժամանակահատուածին, երբ հայրենիքի ինքնիշխանութիւնն ու անկախութիւնը այսօր հարցականի տակ է, որովհետեւ Ատրպէյճան հասկցուց, թէ այն ինչ որ չի կրնար ստանալ քաղաքական ու բանակցային ճնշումներով, պիտի փորձէ ստանալ հրթիռներով: Ան արժանի յարգանքը մատուցեց հայ զինուորին, որ իր քաջարի բազուկով կրցաւ կասեցնել ատրպէյճանցի զինուած ուժերու ստորաբաժանումներուն յարձակումը եւ ետ շպրտեց զանոնք, չթողելով իրականացնել իրենց ծրագիրները, որոնք շատ աւելի հեռահար են քան զանոնք սահմանային միջադէպ կոչելը, ըսաւ Ընկ. Սարաֆեան: Ան անդրադարձաւ Հայաստանի ներկայ քաղաքական իրավիճակին, ՀԱՊԿ-ի անգործութեան, վերջին իրադարձութիւններուն՝ ՄԱԿ-ի արձագանգին, հիւսիսի դաշնակիցի օգնութեան վրայ մեր դրած կոյր վստահութեան, շեշտելով այն իրականութիւնը, որ մեր փրկութիւնը միայն մեր ուժերով պէտք է ըլլայ, առանց ապաւինելու որեւէ արտաքին ուժի, որովհետեւ ոչ ոք մեզի համար կ'ընէ այն, ինչ որ մենք պէտք է ընենք մեզի համար:*



Տոքթ. Համբիկ Սարաֆեան

*Ընկ. Սարաֆեան իր խօսքին առանցքը դարձուց երեք հիմնական կէտեր:*

*1) Միասնականութիւնը. «Մենք թէ՛ պատերազմի նախօրէին, թէ՛ այդ եւ անոր յաջորդող օրերուն, մեր բոլոր յայտարարութիւններուն մէջ նշած ենք միասնականութեան մասին, ոչ որպէս ցանկութիւն, այլ որպէս բացարձակ անհրաժեշտութիւն: Անմիաբանութեան իւրաքանչիւր դրսեւորում նուէր է Ատրպէյճանին, իսկ ան որ այս նեղ ու դժուարին ժամանակահատուածին իշխանափոխութիւն կը պահանջէ, կա՛մ չի տիրապետեր իրավիճակին, կա՛մ ակամայ ջուր կը լեցնէ Ատրպէյճանի ջրաղացին», ըսաւ ան:*

*2) Պետականութեան գիտակցումը. «Մենք որպէս կուսակցութիւններ պարտաւոր ենք պետականութեան հասկացողութիւնը վեր առնելու: Մենք ունինք գիտակցութիւնը, որ այսօր երկիրը համամիասնութեան եւ պետականութեան, դրօշին շուրջ հաւաքուելու հրամայականին առջեւ է: Հնչակեան կուսակցութիւնը Հայաստանի անկախութեան մասին կը ջատագովէր երբ տակաւին այդ անկախութիւնը գոյութիւն չունէր, այսինքն 19-րդ դարու վերջերէն մինչեւ Հայաստանի Ա. Հանրապետութեան հռչակումը: Թերեւս մեր այս անկախութեանը մեզի հեշտ տրուած է, բայց իրականութիւնը այն է, որ անկախութիւնը շատ թանկ բան է, որուն համար բոլորս պատասխանատու ենք ե՛ւ որպէս կուսակցութիւններ, ե՛ւ որպէս անհատներ», ըսաւ Կեդրոնական Վարչութեան ատենապետը:*

*3) Արդիական ու այժմէական, արհեստավարժ բանակի գոյութիւնը: «Մեր անվտանգութեան երաշխիքը կը սկսի բանակէն: Հայ զինուորը փաստեց, որ ինք պատրաստ է անձնուրաց պաշտպանելու երկրին սահմանները, բայց այդ մէկը բաւարար չէ, որովհետեւ հայ զինուորը կարիքը ունի ե՛ւ նիւթական, ե՛ւ ռազմական հնարաւորութիւններու: Հայ զինուորը պիտի զգայ հզօր թիկունքը եւ այդ կ'ապահովուի մեր միասնականութեամբ», շեշտեց Ընկ. Սարաֆեան:*

*ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան ատենապետը իր խօսքը եզրափակեց՝ շեշտելով, որ աշխարհի զանազան գաղութներու մէջ ներկայութիւն ունեցող Հնչակեան կուսակցութեան համար առաջնային է Մայր հայրենիքը, պարտաւորութիւն վերցնելով նեցուկ կանգնիլ Հայաստանի պետականութեան եւ օգտակար ըլլալ անոր: Ան նշեց, որ Սփիւռքի մէջ մենք ունինք բազմաթիւ մարտահրաւէրներ, բայց անոնք երկրորդական են Հայաստանի դիմագրաւած մարտահրաւէրներուն դիմաց: Ան խոստացաւ, որ Հնչակեան կուսակցութիւնը պիտի շարունակէ իր ուղին՝ ըլլալ Հայաստանի պետականութեան կողքին, աջակցիլ անոր պետականութեան, համագործակցիլ եւ մասնակից ըլլալ հայրենիքի բարօրութեան:*

*ՍԴ Հնչակեան կուսակցութեան 135-ամեակի համագումարին առիթով իր ողջոյնի խօսքը ուղարկած էր Հայաստանի Նախագահ Վահագն Խաչատուրեանը: «Հիմնադրման օրէն ի վեր, Հնչակեան կուսակցութիւնը ամենաաշխուժ կերպով ձեռնամուխ եղաւ հայ ազգային, քաղաքական եւ հասարակական կեանքի կազմակերպման գործին: Ցեղասպանութենէն յետոյ Հնչակեան կուսակցութիւնը այն առաջատար կառոյցներէն էր, որ կրցաւ կազմակերպել ու կանոնակարգել ամբողջ աշխարհով սփռուած հայութեան համայնքային կեանքը, մեծապէս նպաստելով Սփիւռքի մէջ հայապահպանութեան գործին»:*

*ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան իր յղած շնորհաւորական ուղերձին մէջ նշած է. «Կուսակցութիւնը իր երկարամեայ գործունէութեամբ ծառայած է մեր ժողովուրդին եւ Հայրենիքին՝ հանդիսանալով հայութիւնը ոգեշնչող, համազգային խնդիրներու լուծման կարեւոր կազմակերպութիւններէն մէկը: Հայաստանի Հանրա-*



Արամ Սարգիսեան

*պետութեան կառավարութիւնը կը կարեւորէ ՍԴՀԿ-ի աջակցութիւնն ու զօրակցութիւնը հայութեան եւ Հայաստանի առջեւ ծառացած կարեւոր խնդիրներու լուծման, ազգային ինքնութեան եւ լեզուի պահպանման, Մայր Հայրենիքի հետ կապերու ամրապնդման գործին մէջ»: (Նախագահին եւ Վարչապետին շնորհաւորագիրները ամբողջութեամբ տեսնել առանձին էջ 2-ի վրայ):*

*Ազգային Ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան իր շնորհաւորական խօսքին մէջ ըսած է. «Փաստացի ձեր կուսակցութիւնը գործող ամենահին կուսակցութիւնն է, որ մշտապէս եղած է Հայաստանի կողքին, բազմաթիւ հայանպաստ ու հայապահպան բազմապիսի ծրագիրներ իրականացուցած է Հայրենիքի եւ Սփիւռքի մէջ»:*

*«Հանրապետութիւն» կուսակցութեան նախագահ Արամ Սարգիսեան սրտի խօսք փոխանցելով շնորհաւորեց 135-ամեակը Հնչակեան կուսակցութեան, որ «ունի լուրջ անցած ճանապարհ եւ ամբողջ գործունէութեան ընթացքին եղած էք պետութեան ու պետականութեան կողքին, կհողմնակից՝ համայն հայութեան միաւորման»: Ան անդրադարձաւ հայաստանեան ներքաղաքական կեանքին եւ ընդգծեց, որ ընդդիմութիւնը անոնք չեն, որոնք իշխանութեան հրաժարականը կը պահանջեն, այլ անոնք են, որոնք այս ծանր իրավիճակներուն մէջ ելքեր կը փնտռեն եւ զանոնք կը փորձեն առաջարկել իշխանութիւններուն, փորձելով լուծել խնդիրները:*

*«Արդար Հայաստան» կուսակցութեան նախագահ Նորայր*



Նորայր Նորիկեան

*Նորիկեան իր ողջոյնի խօսքին մէջ նշեց, որ ինք խորապէս համոզուած է, որ Հնչակեան կուսակցութեան պատմութիւնը ուղղակիօրէն խարսխուած է մեր ժողովուրդի պատմութեան հետ: «Ձեր գործունէութիւնը, հայապահպանութիւնը, սփիւռքի մէջ ձեր քաղաքականութիւնը, ձեր ապրելակերպը, հայրենիքի նկատմամբ ձեր զգացած սրտացաւութիւնը եւ Հայաստանի Հանրապետութեան նկատմամբ ունեցած ձեր վերաբերմունքը կու գայ վկայելու, որ պետականութեան նկատմամբ, հայապահպանութեան նկատմամբ մեր ընկալումները նոյնական են», ըսաւ ան:*

*Հայաստանի Եւրոպական կուսակցութեան Նախագահ Տիգրանի Խզմալեան իր ողջոյնի խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց, որ Հնչակեան կուսակցութիւնը Սփիւռքի մէջ կը պահպանէ ոչ միայն ազգային, այլ պետականութեան գաղափարը: «Մենք բոլորս որպէս ազգ եւ յատկապէս Հայաստանի Հանրապետութիւնը որպէս պետութիւն, պէտք է գիտակցինք, որ կանգնած ենք մեծագոյն աշխարհաքաղաքան, հոգեբանական, ռազմավարական փոփոխութեան շեմին», ըսաւ ան, առաջնահերթ խնդիր համարելով համախմբուիլ ժողովրդավարական ճակատին մէջ, որովհետեւ «միայն ժողովրդավարութեան դաշտին մէջ է մեր յաղթանակը»:*

*Ռոմանոս Մելիքեանի անուան գոլէճի երգչախումբը, գլխաւորութեամբ գեղարուեստական ղեկավար Գրիգոր Յարութիւնեանի, ներկայացուց «Հայաստան» եւ «Ազգ Փառապանծ» երգերը, ինչպէս նաեւ կուսակցութեան «Տուր ձեռքդ, ընկեր» յեղափոխական երգը:*

# ՍԴՀԿ-ի 135-Ամեակին Առիթով «Ազատագրական Պայքարից՝ Անկախ Պետականութիւն» Խորագրով Գիտաժողով



Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան հիմնադրութեան 135-ամեակին առիթով Հայաստանի մէջ կազմակերպուած է գիտաժողով մը՝ «Ազատագրական պայքարից՝ անկախ պետականութիւն» խորագրով: Սոյն գիտաժողովը տեղի ունեցաւ ՀՀ Գիտութիւններու ազգային ակադեմիայի Պատմութեան հիմնարկին հետ համագործակցութեամբ:

Հինգշաբթի, 22 Սեպտեմբեր 2022-ին, ՀՀ ԳԱԱ-ի դահլիճին մէջ տեղի ունեցած գիտաժողովին իրենց մասնակցութիւնը բերին ՍԴՀԿ կեդրոնական վարչութեան ատենապետը եւ անդամներ, Սփիւռքի մէջ կուսակցութեան Վարիչ մարմիններու անդամներ, շարքայիններ, գիտաշխատողներ, պատմաբաններ:

Բացման խօսքով ՀՀ ԳԱԱ Պատմութեան հիմնարկի տնօրէն փրոֆեսոր Աշոտ Մելքոնեան ողջունեց ներկաները, շնորհաւորեց բոլորը Հայաստանի անկախութեան տօնին առիթով: Փրոֆ. Մելքոնեան ըսաւ, որ 135-ամեայ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը անկախութեան գաղափարը դարձուցած էր իր գործունէութեան հիմնական ուղղութիւնը: Կուսակցութեան գլխաւոր նպատակներէն էր անկախ Հայաստանի գաղափարը: Ան նշեց, որ Հայկական հարցի միջազգայնացումէն յետոյ շատ կարեւոր էր, որ մեր ազգային կուսակցութիւնները կեանքի կոչուէին, որովհետեւ անոնք ազգային արժէք են, եւ այդ պատճառով իրենք, որպէս պատմաբաններ, պարտաւոր են ուսումնասիրել անոնց գործունէութիւնը: Փրոֆ. Մելքոնեան աւելցուց, որ ՍԴՀԿ-ը իր ծրագրային փաստաթուղթերուն մէջ արձանագրած է անկախութեան գաղափարին կարեւորութիւնը եւ անոր համար պայքարած է իր գործունէութեան ընթացքին:



Առաջին զեկուցողն էր ԳԱԱ Պատմութեան հիմնարկի աւագ գիտաշխատող, պատմական գիտութիւններու թեկնածու Մկրտիչ Դանիէլեանը՝ «Նարոդնիկներ-հնչակեաններ գաղափարական առնչութիւններ» թեմայով: Դանիէլեան նշեց, որ անկախութիւնը եւ ազատութիւնը չեն մուրար, այլ ձեռք կը բերեն պայքարով, երեւոյթ մը՝ որ կը տեսնենք նաեւ հնչակեան գաղափարականին մէջ: Ան ըսաւ, որ մարտավարութեան առումով հնչակեանները շատ բաներ առին ազգային նարոդնիկական կազմակերպութիւններէն: ՍԴՀԿ-ը նարոդնիկական գաղափարական զօրանոցէն առաւ սոցիալիզմի գաղափարը, ինչպէս նաեւ պետականութեան վերականգնման գաղափարը եւ աւելի յառաջ տարաւ զանոնք:

ԳԱԱ Պատմութեան հիմնարկի տնօրէն փրոֆեսոր Աշոտ Մել-



քոնեան ներկայացուց «Անկախութեան գաղափարը «Հնչակ» թերթի էջերուն մէջ»: Ան ընդգծեց, որ հնչակեանները ոչ միայն չէին բաւարարուեր Արեւմտեան Հայաստանի խնդիրով, այլ նաեւ կը ձգտէին հասնելու հայ ռուսահայ ու պարսկահայ հատուածներու ազատագրութեան: Փրոֆ. Մելքոնեան նշեց, որ կուսակցութեան ծրագրային փաստաթուղթերուն մէջ կ'երեւի, թէ անկախութիւնը ձեռք բերելէ յետոյ ինչ մեխանիզմներ պէտք է ունենալ այդ անկախութիւնը կեանքի կոչելու համար, ըլլան անոնք գաղափարական, տնտեսական կամ այլ բնոյթի, թէ իշխանութեան մարմիններ ինչպէս պէտք է ստեղծուին, ընտրութիւններ ինչպէս պէտք է տեղի ունենան, ինչ հասարակութիւն պէտք է ըլլայ եւ այլն: Փրոֆեսոր Մելքոնեան շեշտեց, որ ՍԴՀԿ հաւատարիմ մնալով իր գաղափարական ծրագրային դրոյթներուն՝ 1918 թուականին ողջունեց Հայաստանի Հանրապետութեան հռչակումը եւ հնչակեանները Խորհրդային Հայաստանի նկատմամբ թշնամական դիրք չբռնեցին ու զայն համարեցին հայոց պետականութեան դրսեւորում:



Պատմական գիտութիւններու դոկտոր Գեղամ Յովհաննիսեան ներկայացուց «Ազգային պետութեան հիմնահարցը «Երիտասարդ Հայաստան» պարբերականին մէջ (1903-1921 թուականներուն): Ան ներկայացուց պարբերականին պատմականը եւ անոր մէջ լոյս տեսած գաղափարական յօդուածներէն բաժիններ, ուր պաշտպանուած են հայկական շահերը, ողջունելով ազգերու ինքնորոշման իրաւունքը: Սապահ Գիւլեանը, որպէս թերթի գլխաւոր խմբագիր, իր յօդուածներով անդրադարձած է հայ-ռուսական յարաբերութիւններուն: Յովհաննիսեան նշեց, որ «Երիտասարդ Հայաստան» պարբերականին մէջ 1921 թուականէն յետոյ աւելի ամրապնդուած է Խորհրդային Հայաստանին օգնելու, անոր աջակցելու, խորհրդային իշխանութիւնը գովերգելու տեսակէտը:



Պատմական գիտութիւններու դոկտոր Գէորգ Խուտինեան ներկայացուց «Իտէալի եւ իրականութեան հակաթեզը ՍԴ Հնչակեան կուսակցութեան եւ ՀՅ Դաշնակցութեան 1890-ական թուականներու ծրագրային փաստաթուղթերուն մէջ» զեկոյցը: Ան նշեց, որ հայ ազգային կուսակցութիւններու ձեւաւորման ու գործունէութեան առաջին տասնամեակին մէջ, անոնցմէ իւրաքանչիւրը ծրագրային գաղափարական առաջադրանքները Արեւմտեան Հայաստանի պայմաններու ու միջավայրին համապատասխանեցնելու հոլովոյթը յառաջ բերած է ազատութեան իտէալը, թրքական իրականութեան հետ բաղդատելու խնդիրը: Հնչակեան կուսակցութեան ծրագրին մէջ ամրագրուած էին ժամանակի հայ յառաջադէմ երիտասարդութեան յառաջդիմական ցանկութիւնները: Խուտինեան ըսաւ, որ եթէ չըլլար հնչակեաններու բուռն յեղափոխական գործունէութիւնը 1890-ականներու առաջին կէսին, իր ցոյցերով եւ ապստամբութիւններով, չէր կրնար ստեղծուիլ ՀՅԴ գործունէութեան հետագայ ուժականութիւնը:



Յաջորդ զեկոյցը ներկայացուց պատմական գիտութիւններու դոկտոր Եղիկ Ճերեճեան՝ «Անկախութեան գաղափարին հոլովոյթը Հնչակեան կուսակցութեան մօտ, «Հնչակ»ի հրատարակութենէն-Հայաստանի Հանրապետութիւն (1887-1920 թուականներուն)» թեմայով: Տոքթ. Ճերեճեան նշեց, որ Հայաստանի անկխութեան գաղափարը Հնչակեան կուսակցութեան մօտ իր առաջին եւ յստակ արտայայտութիւնը գտած է «Հնչակ» պաշտօնաթերթի առաջին թիւի խմբագրականին մէջ 1887-ի Նոյեմբերին: Ան ընդգծեց, որ հետագային 22 հնչակեաններ, երկուքը ի բացայակութեան, մահապատիժի կ'արժանանան անկախ Հայաստան կերտելու նպատակը հետապնդելու համար: Տոքթ. Ճերեճեան շեշտեց, որ ՍԴՀԿ-ը Հայաստանի անկախութիւնը պաշտպանելու իր դիրքորոշումը շարունակած է իր գոյութեան ամբողջ ընթացքին:



Վերջին զեկոյցով հանդէս եկաւ ՍԴՀԿ կեդրոնական վարչութեան անդամ Ալեքսան Քէօշկէրեանը՝ ներկայացնելով «Հնչակեան ծրագիրին մէջ տեղ գտած Հայաստանի անկախութեան գաղափարին ընկալումը օսմանեան դատարաններուն կողմէ»: Ան նշեց, որ 19-րդ դարու վերջաւորութեան եւ 20-րդ դարու սկիզբը հնչակեան գործիչները որպէս հայ ազգային ազատագրական շարժման նուիրեալներ յաճախ յայտնուած են օսմանեան դատարաններուն առջեւ իրենց կատարած թէ չկատարած «յանցագործութիւններուն» համար, եւ որպէս ծանր յանցագործութիւն առերեսուած են Հնչակեան կուսակցութեան ծրագիրին մէջ տեղ գտած անկախ Հայաստանի գաղափարին հետ: Քէօշկէրեան մատնանշեց, որ հնչակեան մտաւորականներ եւ գործիչներ տարբեր կալանավայրերու եւ դատարաններու մէջ բռնութիւններու կ'ենթարկուէին որպէսզի խոստովանին իրենց առնչութիւնը անկախ Հայաստանի «դաւադրական ծրագրին հետ»:

# Դարձեալ Մեր Ցաւին Մասին

*ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ*

*Մեր ազգային իրավիճակը, որ կը պարզուի մեր աչքին, դժբախտաբար անգամ մը համար եւս ցաւալի կը գտնենք: Բայց այս մասին անդրադառնալէ եւ առաջարկներ ընելէ առաջ, անհրաժեշտ կը նկատենք պարզել մեր առաջարկներուն հիմք ծառայող ենթահողը, որպէսզի աւելի յստակ ըլլայ պատկերը եւ մեր ընելիքը: Սկսինք համաշխարհային պատկերէն, հասնելու համար մեր իրավիճակին:*

*Պերլինի պատի քանդումով եւ Սովետական Միութեան փլուզումով ազդանշանը տրուեցաւ համաշխարհային նոր համակարգի մը ձեւաւորման գործընթացին: Շատ կարճ ժամանակ մը ԱՄՆ-ը դարձաւ աշխարհի մենատէրը եւ նոյնիսկ սկսաւ խօսուիլ, որ ԱՄՆ-ի դաւանած ազատական ժողովրդավարութեան յաղթանակով, պատմութեան եղափոխութեան ընթացքը հասած է իր աւարտին: Շուտով սակայն յայտնի դարձաւ, որ ԱՄՆ-ով առաջնորդուող միաբեւեռ աշխարհը կը վերադառնայ երկբեւեռ դրութեան, Չինաստանի հզօրացումով:*

*Կ՚արժէ այստեղ փակագիծ մը բանալ Չինաստանի առնչութեամբ: Օգտուելով 1969-ի Չին-Սովետ հակամարտութիւնէն, ԱՄՆ-ը աննախադէպ քայլի ձեռնարկեց, 1972-ին Նիքսըն-Մաօ Ցէ Թունկ հանդիպումով, այսպիսով սեպ մը խրելով ձախակողմեան աշխարհի համակարգին մէջ: Քսանամեակ մը չանցած, փլուզուեցաւ Սովետական Միութեամբ առաջնորդուող ձախ բեւեռը: Ներկայիս, երբ Չինաստանն է ձախ բեւեռի առաջնորդը, ինչո՞ւ համար ԱՄՆ-ը 1972-ի օրինակով չի փորձէր սիրաշահիլ Ռուսիան, այլ կը փորձէ չէզոքացնել կամ իրեն ենթարկել զայն (Ուքրանիոյ պատերազմին միջոցաւ): Արդեօ՞ք Ելցինեան տարիներուն իր սխալ գործելաձեւին որպէս արդիւնք Փութինի երեւոյթին յայտնուիլը արգելք կը հանդիսանայ այդպիսի ռազմավարութեան մը կիրառկման:*

*Յստակ պէտք է ըլլայ բոլորիս համար, որ համաշխարհային բեմի վրայ, մեր անուանումով՝ »լուռ պատերազմ« մը կը մղուի Չինաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ, որուն աղմուկը կը լսենք Ռուսիա-Ուքրանիա հակամարտութեան բեմէն: Այս »լուռ պատերազմ«ին յատկանիշերէն են ԱՄՆ-ի կողմէ ՆԱԹՕ-ի ընդլայնումը 1999-էն սկսեալ եւ Չինաստանի նախաձեռնութեամբ 2001-ին հիմնուած Շանհայի Գործակցութեան Կազմակերպութիւնը (ՇԳԿ), ինչպէս նաեւ »Գօտի եւ Ճամբայ« նախաձեռնութիւնը 2013-էն սկսեալ: Այս զարգացումներուն հետ կապուած կ՚արժէ նաեւ նշել, որ Փութին իշխանութեան եկաւ 1999-ին եւ Խրիմի կցումը եղաւ 2014-ին:*

*Համաշխարհային բեմի վրայ ընթացող այս զարգացումներէն կը փորձուին օգտուիլ բոլոր պետութիւնները, մեկնած իրենց ազգային շահերէն: Երբ աչքի առջեւ կ՚ունենանք Կովկասեան տարածաշրջանը, կը տեսնենք, որ այս վիճակէն լաւագոյնս օգտուողը առայժմ Թուրքիան է: Թուրքիան, որ չյաջողեցաւ Եւրոպական Միութեան անդամակցիլ (դէպի Արեւմուտք թեքում). Թուրքիան, որ չյաջողեցաւ դառնալ Իսլամական ու Արաբական աշխարհի առաջնորդը (դէպի Արեւելք թեքում), արդէն իսկ որոշ յաջողութիւններու հասած է Կովկասեան տարածաշրջանին մէջ, իրեն ենթարկելով Ազրպէյճանը եւ սրելով իր փանթուրանական ախորժակները: Ձեւաւորման ընթացքի մէջ եղող երկբեւեռ (ՆԱԹՕ-ՇԳԿ) աշխարհին մէջ շատ զգայուն դեր վերապահուած է Թուրքիոյ, որ թէեւ անդամ է ՆԱԹՕ-ի, բայց կ՚ուզէ գործակցիլ նաեւ ՇԳԿ-ի հետ: Նշենք, որ ՇԳԿ-ն կը բաղկանայ հետեւեալ անդամներէ. Չինաստան, Ռուսիա, Ուզպէքստան, Ղազախստան, Քիրկիզստան, Տաճիկստան, ինչպէս նաեւ Հնդկաստան եւ Փաքիստան, որոնք միացան 2017-ին եւ Իրան, որուն անդամակցութիւնը պիտի վաւերացուի 2023-ի Ապրիլէն ետք: Աշխարհի բնակչութեան կէսէն աւելին կը գտնուին այս երկիրներուն մէջ: Թուրքիա չի կրնար անդամակցիլ ՇԳԿ-ի առանց հրաժարելու ՆԱԹՕ-էն: Իսկ անդամակցութեան պարագային, ոչ միայն պիտի չկարենայ իրականացնել իր փանթուրանական երազները, այլեւ կրնայ վտանգի տակ դնել իր հողային ամբողջականութիւնը, ԱՄՆ-ի կողմէ հրահրուելիք Քիւրտիստանի մը ստեղծումով:*

*Կը տեսնէ՞ք, որ որքան բարդ են համաշխարհային զարգացումները: Այս լոյսի տակ պէտք է դիտել նաեւ ԱՄՆ-ի Ներկայացուցիչներու Տան խօսնակ՝ Նէնսի Փելոսիի այցերը Ուքրանիա (Ապրիլ 30-Մայիս 2), Թայուան (Օգոստոս 2-4) եւ Հայաստան (Սեպտեմբեր 17-18): Ինչ կը վերաբերի Հայաստանին, կ՚արժէ նշել, որ Եւրասիական տարածաշրջանին մէջ ԱՄՆ-ի եւ Չինաստանի մեծագոյն դեսպանատուները կը գտնուին Երեւանի մէջ: Կ՚արժէ նաեւ նշել յատկանշական մի քանի տեղեկութիւններ, ինչպէս՝ ԱՄՆ-ի Եւրոպայի եւ Եւրասիայի հարցերով պետական քարտուղարի օգնական, բարձրաստիճան դիւանագէտ Ֆիլիփ Ռիքէրի նշանակումը որպէս ԵԱՀԿ-ի համանախագահ, Իրանի հիւպատոսարանի բացումը Կապանի մէջ, Հայաստանի մէջ Չինաստանի դեսպանին այցը Սիւնիք, 3 օրերու տարբերութեամբ, ԱՄՆ-ի եւ Ռուսիոյ հետախուզութեան պետերու այցը Հայաստան, եւ շատ այլ բարձրաստիճան ղեկավարներու այցելութիւնները Հայաստան, հասկնալու համար Հայաստանի առնչութիւնը համաշխարհային զարգացումներուն, եւ որ ինչպիսի ճակատագրական ժամանակաշրջան մը կը բոլորենք ազգովին, որ մեզի կը պարտադրէ գործել ծայրագոյն լրջութեամբ եւ զգուշութեամբ, միշտ առաջնորդուելով մեր պետական շահերը գերադասելու սկզբունքով:*

*Իսկ ինչի՞ ականատես կ՚ըլլանք մենք: Դժբախտաբար անգամ մը համար եւս մխրճուած ենք մեր անհատական ու հատուածական շահերու հետապնդման բաւիղին մէջ: Մեր համոզումով, մեր*

Շար.ը էջ 18




AGBU ASBEDS
Invite you to meet Award winning Director
JIVAN AVETISYAN
At Q&A & private screening of "TEVANIK"

AGBU ASBEDS

Sunday, Oct 23, 2022
5:00pm

AGBU Vatche & Tamar Manoukian
Performing Arts Center
2495 E MOUNTAIN ST. PASADENA, CA 91104
FREE TO THE PUBLIC - RECEPTION TO FOLLOW

Coincided with the release of his award winning "Gate to Heaven" at AMC Theaters Starting October 21



FOR RSVP & INQUIRIES CALL (626) 794-7942

Massis Weekly
Volume 42, No. 36 Saturday, October 1, 2022

# Opening Ceremony of SDHP 22nd World Congress of the Social Democrat Hunchakian Party Held in Yerevan



YEREVAN — On Saturday, September 24, 2022, the 22nd Congress of the Social Democrat Hunchakian Party (SDHP) commenced in the "Ani Hall" at Ani Plaza hotel in Yerevan, in the presence of the chairman of the Central Committee, members, representatives of the governing bodies of various regions of the party, party friends and affiliates, the President of the "Republic" party of Armenia Mr. Aram Sargsyan, Chairman of the "Artar Hayastan" party Mr. Norayr Norikian and Chairman of the European Party of Armenia Mr. Tigran Khzmalyan.

Prior to the official opening ceremony of the congress, an exhibition of SDHP archives was held at the entrance of the hall. Documentary posters from the 135-year history of the Party were painstakingly collected through the efforts of Dr. Yeghik Jeredjian. The symbolic beginning of the uprising, photos of Hunchakian heroes and their exploits, segments of their political activities, and posters commemorating the immortal "Twenty" were presented.

Republic of Armenia and SDHP party anthems were performed by the Mr. Romanos Melikyan State Musical College choir.

Opening the ceremony portion of the congress, SDHP Central Committee member Mr. Alexan Keoshkerian welcomed the attendees and emphasizing that the SDHP has existed for 135 years, it remains with the Armenian people, and its red flag is painted with the blood of thousands of martyrs who fell on the road of the national liberation struggle. Mr. Keoshkerian highlighted the participation of youth in Party activities adding that it is one of the important guarantees for the existence, sustainability, and modernization of the SDHP.

In his remarks, Lebanon Dkhruni Student and Youth Association Chairman Mr. Dikran Mihranian expressed that it was a great honor to participate in the 22nd congress of the SDHP on its native land and deliver a speech on behalf of all Hunchakian youth organizations. "For the youth of the Hunchakian Party, today is a day of renewing the covenant and vow, as our founders made 135 years ago, to selflessly serve the Armenian people and homeland. As in the past, when the Hunchakian party was always on the frontlines of the struggle, today too, the new generation of this glorious party promises to continue that sacred mission," said Mihranian.

The Social Democrat Hunchakian Party's message was conveyed by the Chairman of the Central Committee Dr. Hampik Sarafian. He noted that the 22nd congress of the party is taking place during the most fateful period for the Motherland, when the sovereignty and independence of the Motherland are under question today due to

Continued on page 3

# SDHP Has Always Played an Important Role in Processes of Pan-Armenian Significance. PM Pashinian



YEREVAN — Prime Minister Nikol Pashinyan has sent a congratulatory message to the delegates gathered in Yerevan for the 22nd worldwide convention (Hamakoumar) of the Social Democrat Hunchakian Party, which coincides with the 135th anniversary of the establishment of the Party.

"Dear representatives of the Social Democrat Hunchakian Party, I

Continued on page 3

# Meeting Pashinyan in Paris Macron Demands the Return of Azerbaijani Forces to Their Initial Positions



PARIS — French President Emmanuel Macron on Monday blamed Azerbaijan for this month's deadly fighting on the Armenian-Azerbaijani border and urged it to stop using force to resolve the conflict with Armenia.

Meeting with Prime Minister Nikol Pashinyan in Paris, Macron said Azerbaijani troops should withdraw from Armenian border areas seized by them during the two-day hostilities that broke out on the night from September 12-13.

"Since [Armenian army] positions were captured, France demanded that Azerbaijani forces return to their initial positions," he told the press before the start of the talks with Pashinyan at the presidential Elysee Palace. "I said that to President [Ilham] Aliyev right from September 14.

The fact that the border is not delimited does not justify advances into the territory of the other country. I have also said since September 13 that France believes recourse to force

Continued on page 4

# S.D. Hunchakian Party Meets with US Ambassador to Armenia, Lynne Tracy



YEREVEN — A delegation of the Social Democrat Hunchakian Party (S.D.H.P), headed by Central Committee Chairman Mr. Harry Sarafian along with members of the Armenian Council of America (A.C.A.), met with U.S. Ambassador to Armenia, Lynne Tracy, on September 22, 2022.

The meeting included discussions regarding regional developments, the current security situation and recent border attacks inside Armenia, the status of the peace process, the commitment to advance democracy within Armenia, economic development, and other key issues affecting Armenians in the Homeland and the Diaspora.

The delegation thanked the Ambassador for her service and leadership in promoting democracy, human rights and economic development within Armenia and strengthening US Armenia relations in all spheres.

## White House National Security Adviser Hosts a Meeting BetweenArmenian, Azerbaijani Security Officials



WASHINGTON, DC — On September 27, US President Joe Biden's National Security Adviser Jake Sullivan hosted a meeting between the Secretary of Armenia's Security Council Armen Grigoryan and the Assistant to the President of Azerbaijan Hikmet Hajiyev at the White House.

Sullivan described the trilateral meeting as "constructive."

"We discussed the importance of avoiding further violence and pursuing time-bound and focused negotiations," he wrote on Twitter. "We also identified concrete steps forward in support of a stable and lasting peace."

Sullivan did not reveal those steps or give other details.

In a Facebook post, Grigoryan said the talks focused on a "long-term peaceful settlement of the Nagorno-Karabakh conflict" and the "establishment of peace in the region."

For his part, Hajiyev was reported to say that the three sides discussed a peace treaty and transport links between Armenia and Azerbaijan as well as the demarcation of their border. He did not elaborate.

U.S. Secretary of State Antony Blinken similarly met with the Armenian and Azerbaijani foreign ministers in New York on September 19. Blinken urged them to meet again before the end of September.

The New York talks came just days after heavy fighting on the Armenian-Azerbaijani border left at least 280 soldiers from both sides dead. Azerbaijani troops reportedly attacked and seized some of the Armenian army positions there.

U.S. State Department Spokesman Ned Price insisted on Monday that Azerbaijan should "return troops to their initial positions." "The use of force is not an acceptable path," he said.

Price also said that Washington will "continue to engage and encourage the work needed to reach a lasting peace because there can be and there is no military solution to this conflict."

Grigoryan and Hajiyev held three meetings in Brussels earlier this year. They were mediated by a senior European Union diplomat.

## French Defense Ministry Delegation to Visit Armenia to Assess the Situation After Azerbaijani Aggression



PARIS -- A French Defense Ministry delegation will be sent to Armenia to assess the current situation on borders, French Defense Minister Sébastien Lecornu said during the meeting with his Armenian counterpart Suren Papikyan.

"I received today the Minister of Defense of Armenia Suren Papikyan. "We discussed the situation on the border with Azerbaijan where the hostilities must cease, and the Azerbaijani forces must return to their initial positions. I have announced the rapid dispatch of a French delegation to Armenia to assess the situation", Sébastien Lecornu said.

It was not immediately clear whether the delegation will also explore the possibility of French military aid to Armenia.

## Congressman Adam Schiff Issues Statement on Two-Year Anniversary of the Six-Week War in Artsakh




WASHINGTON, D.C. – Congressman Adam Schiff (D-Calif.) issued the following statement on the two-year anniversary of Azerbaijan and Turkey's six-week war on Artsakh:

"On September 27, 2020, over the course of six weeks, Azerbaijan and Turkey brutally attacked the people of Artsakh – murdering scores of innocent civilians, displacing tens of thousands more, and creating a mass humanitarian disaster that has devastated countless Armenian families abroad and here in the United States. The war was perpetrated by a bloodthirsty dictator in Baku who chose to answer domestic discontent by making war against a peaceful neighbor.

"Today we mark two years since Aliyev launched his assault – but tragically, his war did not end after that 44-day invasion. Despite an internationally-brokered ceasefire agreement, Azerbaijan's aggression against the people of Artsakh and Armenia has continued, more than 100 Armenian soldiers remain illegally detained and subject to horrific torture, and thousands of families live in fear of the next attack. And Azerbaijan's violence again escalated earlier this month, when Azeri forces shelled homes in the villages of Karmir Shuka and Taghavard in Artsakh, and launched an unprovoked assault on sovereign Armenian territory.

"These latest attacks are proof that Azerbaijan will continue to terrorize the people of Artsakh and Armenia until their aims are achieved. Aliyev has nothing but contempt for the international community's efforts to bring stability to the Caucasus, and he must be stopped. He has been emboldened by the international community's language of false equivalence in the face of these premediated attacks on the Armenian people. Until there are real consequences, Aliyev will continue to expand his war, and more innocent lives will be lost.

"The United States must take strong and meaningful action against Azerbaijan. We must permanently cease all assistance to the Aliyev regime, demand the release of all political prisoners, explore sanctions, and seek the prosecution of war crimes, and of crimes against humanity. My colleagues and I will continue to urgently pursue legislation in Congress that achieves those aims, and we will not rest until the United States takes action.

"My heart breaks for the people of Artsakh and Armenia and my Armenian American constituents whose families and loved ones have been lost, displaced, and terrorized since the beginning of Azerbaijan's war. Today and every day, I will continue to urge action against the Baku regime, until the Armenian people know the peace and freedom they have been deprived of for far too long."

## Greece Voices Solidarity With Armenia



YEREVAN -- Greek Foreign Minister Nikos Dendias condemned Azerbaijan's recent military aggression at the border with Armenia and also blamed Turkey for the dramatic escalation of the Armenian-Azerbaijani conflict as he visited Yerevan on Tuesday.

"We Greece have repeatedly underlined that we support the sovereignty and territorial integrity of all states," Dendias said after talks with his Armenian counterpart Ararat Mirzoyan. "That goes also for our dear friends, the Armenians, Armenia."

"We believe in the inviolability of borders, and I am referring to the incidents that happened just a few days ago following the shelling of Armenian territory, including inhabited areas, by the Azeri military forces," he told a joint news briefing. "And I would like to quote [French] President Macron who said yesterday: 'I strongly condemn what happened in recent days and call for peace and resumption of negotiations.' So I am here to express our solidarity with the Armenian government and the Armenian people."

Dendias went on to denounce attempts to "redraw maps," pointing the finger at not only Azerbaijan but also its key ally, Turkey.

"Turkey is trying to take advantage of the recent turmoil in order to undermine peace and stability, be it in the Caucasus or the Aegean," he

Continued on page 4

# Opening Ceremony of SDHP 22nd World Congress

Continued from page 1

the Azerbaijan resorting to utilizing missiles to get what it wants since political pressures have not been successful. He paid due respect to the Armenian soldier, who with his bravery, was able to stop the recent attacks of the Azerbaijani armed forces, pushing them back and not allowing them to implement their plans, which are much more far-reaching than being referred to as a "border incident," said Sarafian.

Dr. Sarafian also discussed the current political situation in Armenia, the inaction of the CSTO, recent events, the response of the United Nations, and the blind trust in the help of the northern ally, stressing the reality that our salvation should be only by our own forces, without relying on any external force, because no one will do for us what we have to do for ourselves.

Dr. Sarafian focused on three main points in his speech.

1) Unity: "On the eve of the war, and in the days following it, in all our statements, we mentioned unity, not as a wish, but as an absolute necessity. Every manifestation of disunity is a gift to Azerbaijan, and those who demands a change of government in this narrow and difficult period, either do not have full grasp of the situation or is unintentionally filling Azerbaijan's mill with water," he said.

2) Realization of statehood: "As a political party, we are obliged to take up the understanding of statehood. We are aware that today the country is faced with the imperative of unity and statehood, gathering around the flag. The Hunchakian party advocated for the independence of Armenia when that independence did not exist yet, that is, from the end of the 19th century until the end of the 20th century Proclamation of the Republic. Perhaps this independence of ours was given to us easily, but the reality is that independence is a very precious thing, for which we are all responsible both as a political party and as individuals," said the Chairman of the Central Board.

3) The existence of a modern professional army: "The guarantee of our security starts with the army. The Armenian soldier has shown that he is ready to selflessly protect the country's borders, but that alone is not enough, because the Armenian soldier needs both material and military capabilities. The Armenian soldier needs to feel our strong support and be ensured by our unity," stressed Sarafian.

The Chairman of the SDHP Central Committee concluded his speech by emphasizing that the Motherland is a priority for the Hunchakian party, which has a presence in various Armenian communities around the world, stands up for the statehood of Armenia and works diligently to be helpful to it. He mentioned that we have many challenges in the Diaspora, but they are secondary to the challenges faced by Armenia. He promised that the Hunchakian party will continue its path to stand next to the statehood of Armenia, support its statehood, and to cooperate and participate in the welfare of the Motherland.



President of Armenia Vahagn Khachaturyan sent his congratulatory message on the occasion of the 135th-anniversary and 22nd congress of SDHP. "Since the day of its foundation, the Hunchakian party has been actively involved in the organization of Armenian national, political and social life. After the Genocide, the Hunchakian party was one of the leading structures that managed to organize and regulate the community life of Armenians scattered all over the world, greatly contributing to the cause of Armenian preservation in the Diaspora. After the independence of Armenia, the party was directly involved in the process of building a state, always demonstrating a state-centered and principled behavior, putting all its capabilities into the strengthening and establishment of an independent Armenia. And even today the Hunchakian party unconditionally and unequivocally stands by the state."

RA Prime Minister Nikol Pashinyan in his congratulatory message stated: "The party, with its continuing movement, has served our people and the Motherland, being one of the important organizations that inspire Armenians and solve nationwide problems. The government of the Republic of Armenia attaches importance to the support and cooperation of the SDHP in solving the important problems faced by Armenians and Armenia, preserving national identity and language, strengthening ties with the Motherland, developing Armenia and Artsakh, and solving other issues." (The entire message of the Prime Minister can be found here)

The Speaker of the National Assembly, Alen Simonyan, stated in his congratulatory message: "Your party is the oldest active party that has always been on Armenia's side. It has implemented many pro-Armenian and pro-Armenia programs in the Homeland and the Diaspora."

"Republic" party Chairman Aram Sarkisian congratulated the SDHP on its 135th anniversary, saying that "it had a serious road and throughout its activity you have been with the state and the statehood, building the unity of all Armenians." He referred to the internal political life of Armenia and emphasized that the opposition are not those who demand the resignation of the government, but they are those who are looking for solutions in these difficult times and are trying to offer them to the authorities, trying to solve the problems.

The Chairman of the "Artar Hayastan" party, Norayr Norikyan, said in his welcoming speech that he is deeply convinced that the history of the Hunchakian party is directly connected with the history of our people. "Your activities, Armenian preservation, your politics in the Diaspora, your lifestyle, your heartache towards the Motherland, and your attitude towards the Republic of Armenia will testify that our perceptions towards statehood and Armenian preservation are the same," he said.

In his welcoming speech, the President of the European Party of Armenia, Tigran Khzmalyan, expressed gratitude that the SDHP in the Diaspora preserves not only the idea of patriotism, but also statehood. "All of us as a nation, and especially the Republic of Armenia as a state, must realize that we are standing on the threshold of the greatest geopolitical, psychological, strategic change," he said, considering it a priority to unite on the democratic front, because "our victory is only in the field of democracy, our salvation, the existence of our state."




During the closing of the event the choir, led by artistic director Grigor Harutunyan, beautifully performed the songs "Hayastan" and "Glorious Nation," as well as the party's revolutionary song "Lend me your hand, friend."

# SDHP Has Always Played an Important Role

Continued from page 1

warmly congratulate you on the 135th anniversary of the party.

With its long-term activity, the party has served our people and the Motherland, being one of the important organizations that inspire Armenians and solve nationwide problems.

Such party individuals and intellectuals, such as Smbat Byurat, Stepanos Sapah-Gulyan, Metsn Murad, Aderbed, Paramaz are worth mentioning for their nationalistic activities.

This traditional party has always played an important role in processes of pan-Armenian significance, proving its vitality with its history and past path.

Not only the activity and history of the Social Democrat Hunchakian Party, but also its role in the organization of political and social life in the Diaspora deserve high praise. In particular, the party's contribution to the protection of Armenians and strengthening of Armenia-Artsakh-Diaspora ties is invaluable.

The Government of the Republic of Armenia attaches importance to the support and cooperation of the SDHP in solving important problems faced by Armenians and Armenia, preserving national identity and language, strengthening ties with the Motherland, developing Armenia and Artsakh, and solving other issues.

Congratulating once again on the occasion of the 135th anniversary of the founding of the Social Democrat Hunchakian Party, I wish you fruitful party-building activities for the sake of the people of Armenia and all Armenians."

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս»
Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net (626) 797-7680

## "I am Servant of Your Voice: Armenian-American Soprano Zabelle Panosian, 1891-1986" by Ian Nagoski and Harout Arakelian

FRESNO — Music researcher and producer Ian Nagoski and music collector and researcher Harout Arakelian will present an in-person lecture entitled "I am Servant of Your Voice: Armenian-American Soprano Zabelle Panosian, 1891-1986" at 7:00PM on Thursday, October 13, 2022, in the Industrial Technology Building, Room 101 (corner of Barstow and Campus Dr.) in the Fresno State campus. The presentation is part of the Fall Lecture Series of the Armenian Studies Program.

The soprano Zabelle Panosian (b. Bardizag 1891; d. New York City 1986) was among the most significant voices of the genocide generation of Armenian-Americans. She recorded 11 songs from March 1917 to June 1918 for Columbia Records in New York City and personally raised millions of dollars for the relief of Armenians through benefit concerts in the late '10s, regularly collaborating with the tenor Armenag Shah-Mouradian. Her recordings resonated with audiences for decades. She toured Europe successfully and sought out Komitas Vardapet in Paris, publishing a first-hand account of her meeting with him as a devotee of his work.

Panosian's music and story underwent a period of forgetting during her lifetime and especially since then. But through recent listening to her breathtakingly beautiful, century-old recordings a revival of her legacy is taking place. Non-Armenians all over the world are learning her name and her music and, through them, a story of the Armenian-American audience who cared for her during the wake of the genocide, awakening a previously neglected story of a great American singer.

A newly published biography of Panosian, Zabelle Panosian: I am a Servant of your Voice, undertaken by three independent researchers, presents her story along with new, careful restorations of her complete recordings providing an opportunity to




look deeply into the life and music of a unique and serious artist who left an amazing body of work.

Ian Nagoski who published Panosian's biography will talk about her life and music along with comments by his co-author Harout Arakelian who will speak directly to her relationship to the Fresno area.

Ian Nagoski is a music researcher and record producer in Baltimore, Maryland. For more than a decade, he has produced scores of reissues of early 20th century recordings in languages other than English for labels including "Dust-to-Digital," "Tompkins Square," his own "Canary Records," and others. His enthusiastic talks have been hosted at the Library of Congress in Washington D.C., the Onassis Cultural Center in Athens Greece, the University of Chicago, the University of Pennsylvania, and New York University.

Harout Arakelian is a video editor, music collector and researcher based in Los Angeles, California. His focus is the Armenian contribution to the landscape of art and culture, with a specific lens on the American experience. He is actively working on collecting every known commercial recording from the 78 rpm era.

## Vancouver Theatrical Production of "Where Is Your Groom?" Will Perform on Saturday, October 15, 2022



VANCOUVER 0–n The Armenian-American comedy play "Where Is Your Groom?(Pesad Oor Eh)" will be performed for the Vancouver Armenian community on Saturday, October 15, 2022 at the Michael J. Fox Theatre, in an event hosted by the Armenian Cultural Association of British Columbia.

"Where Is Your Groom?", written by Taleen Babayan and directed by Jirayir Arslanyan, is a play that crosses ethnic boundaries and delivers shared laughs as it follows the story of an Armenian-Canadian family's quest to find their daughter a suitable spouse. The themes of assimilation, cultural identity and generational divides take center stage in this warm-hearted comedy that shows the lengths one family will go to in order to maintain their ethnic ties while living in North America. The play is in both English and Armenian, and suitable for Armenian and non-Armenian speaking audiences.

The play debuted under Babayan's tutelage in New York City in 2013. The original and its sequel have gone on to perform over 15 times around the U.S., including in Los Angeles, Boston, Philadelphia, Washington, D.C. and Fresno, featuring close to 50 different cast and crew members. This current iteration will spotlight a local cast from the greater Vancouver region.

For members of the Armenian Canadian Armenian community, it was a chance to widen their horizons, participate in their culture, and enjoy their time on stage.

"It's been fulfilling getting to know others in the community and really forming a bond as a group," said Natalie Arslanyan, who plays the character of bride-to-be Lara. "This has been a unique experience that I'll cherish forever."

After focusing on music for the last few years, Ivan Vladikovic returned to his acting roots for the role of "Matt," a non-Armenian vying for Lara's affection. Reflecting on his grandfather's Armenian heritage, Vladikovic felt a connection to the character, who is a musician.

"This character and play hits home with me as it draws many parallels to my personal life," said Vladikovic. "I'm truly excited for gaining better insight into my heritage and the Armenian community through theatre and art."

As Chairperson of ACA of BC, Anita Desjardins was looking to organize a cultural event for the community that would "lift the spirits and bring people together" after two years of experiencing the COVID pandemic.

"'Where is your Groom'" is the perfect vehicle for not only the Armenian community but the larger Canadian community as well," said Desjardins. "It's hard work and a labour of love, but it has brought a wide variety of members together, including first, second, and third generation Canadian-Armenians, in a real spirit of friendship and cooperation."

"I'm delighted that 'Where Is Your Groom' continues to come alive on stage and themes that hit home in our daily lives and communities," said Babayan.

## Meeting Pashinyan in Paris Macron Demands

**Continued from page 1**

cannot be a solution for Armenia or Azerbaijan and that the dialogue must be reestablished without delay."

"President Aliyev, to whom I will speak again in the coming hours, says that he too is willing to put an end to regional instability and strive for solutions. But one cannot build peace while threatening to use force," stressed Macron.

Macron said he will discuss with Pashinyan ways of "consolidating" the shaky ceasefire and preventing another escalation of the conflict. In that regard, he called for the resumption of high-level Armenian-Azerbaijani negotiations mediated by the European Union.

Pashinyan thanked Macron for condemning the Azerbaijani "aggression." He also reiterated his stated readiness to sign a comprehensive Armenian-Azerbaijani peace treaty if Baku agrees to recognize Armenia's current borders.

"France holds the presidency of the UN Security Council, and also with the support of France and personally President Macron, the issue of another aggression by Azerbaijan against Armenia was included in its agenda. An earnest discussion took place, and the issue remains on the agenda of the Security Council". Pashinyan stated.

As for the Nagorno-Kasrabakh conflict Pashinyan said: "We also attach importance to the settlement of the Nagorno-Karabakh issue, which will guarantee the rights and security of the Armenians of Nagorno-Karabakh. I think the start of Azerbaijan-Nagorno Karabakh discussions can be useful. In this context, I must emphasize the role of France as an OSCE Co-chair country.

## Greece Voices Solidarity With Armenia

**Continued from page 2**

charged, pointing to Ankara's "threat of war against Greece" voiced in an intensifying dispute over Greek islands in the Aegean Sea.

Mirzoyan thanked Athens for its position on the border clashes of September 13-14 which Yerevan regards as Azerbaijani military aggression.

Predictably, Ankara has voiced full support for Baku after what was the worst fighting in the conflict zone since the 2020 war in Nagorno-Karabakh.

Dendias flew to Yerevan just over a week after he, Mirzoyan and Foreign Minister Ioannis Kasoulides of Cyprus held a trilateral meeting in New York on the sidelines of an annual session of the UN General Assembly. The three nations share historically strained relations with Turkey.

"We are looking forward to enhancing our trilateral partnership with Cyprus to a new level," said Dendias, who held separate meetings with Prime Minister Nikol Pashinian and Defense Minister Suren Papikian later on Tuesday.

The Greek minister's trip coincided with the second anniversary of the outbreak of the 2020 Armenian-Azerbaijani war. He had previously visited Armenia during the six-week hostilities.

# Եարը Մարդուն Եարայ Կու Տայ...
## (Անզուգական Երգիչ Լեւոն Գաթրճեանի Յիշատակին)

Ես այն հայի տունը կ'երթամՈվ խօսում է հայերէն

ԳՈՒՍԱՆ ՇԱՀԷՆ

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ



*Օրերս Հոլիվուդի ծանօթ գերեզմանատանը հողին յանձնուեց հայ երգարուեստի փառաբանուած երգիչ Լեւոն Գաթրճեանի անշնչացած մարմինը: Ըստ հաւաստի տեղեկութեան, փոքրաթիւ հուղարկաւորների ներկայութեան: Հիմնական պատճառը ողջ հայութեան ներկայիս ծանր հոգեվիճակն է եւ հանգուցեալի քսան տարուայ բացակայութիւնը Լոս Անջելէսի մշակութային կեանքից: Ինչ որ չափով կարելի է «արդարացնել» երգչի փոքրիշատէ այպանելի անտարբերութիւնը, մեր համայնքի նկատմամբ, որի պատճառը նրա մշտատեւ համերգային ուղեւորութիւններն են:*

*Միթէ՞ կարելի է մոռանալ հայ աշուղական, ժողովրդական, յեղափոխական, ֆիտայական երգերի անգուգական կատարող Լեւոն Գաթրճեանին: Իր մահով նա ծանր պարտականութիւն դրեց մեր առջեւ: Մենք պարտաւոր ենք նրա փառքին արժանի յետմահու հանդիսաւոր երեկոներ իրականացնել աշխարհի բոլոր ծագերում՝ ուր որ հայ կայ: Ես ինքս, պարտք ունեմ նրան տալիք, որի մասին կը խօսեմ քիչ անց, իսկ ներկայիս, ես պատրաստ եմ համագործակցել բոլոր նրանց հետ, ովքեր ցանկութիւն կ'ունենան համբաւաւոր երգիչ եւ յօրինող Լեւոն Գաթրճեանի փառքին վայել յետմահու երեկոյ կազմակերպել:*

*...Հալէպում ծնուած վտիտ մարմնով Լեւոնը մի շատ կարեւոր առաւելութիւն ունէր իր հասակակիցների համեմատ: Աստուածատուր, հմայիչ գեղեցիկ ձայն, գերազանց լսողութիւն եւ ռիթմի բացառիկ զգացողութիւն:*

*Մի քանի տարի Հալէպի ճաշարաններից մէկում երգելուց յետոյ Լեւոնը հասկացաւ,, որ մարդիկ ուտել-խմելու հետ մէկտեղ սրտի եւ հոգու սնունդի էլ պէտք ունեն ու հաւատալով իր ուժին ու կարողութեանը, որոշեց մեծ սրահներում հոգեկան սնունդ տալ մարդկանց: Հայրենասիրական նպատակի իրականացման համար, նա ընտրեց Միջին Արեւելքում Փոքրիկ Փարիզ համարուող Լիբանանի մայրաքաղաք Պէյրութը, որի երաժշտասէր հասարակութիւնը գրկաբաց ընդունեց տաղանդաւոր երիտասարդ երգչին, որի կատարողական վարպետութեանը տեղեակ էր դարձել Հալէպ գնացող-եկողների միջոցով:*

*1963-66 թ.թ. Լեւոն Գաթրճեանը սովորում է Պէյրութի պետական երաժշտանոցում:*

*Այս կապակցութեամբ պատմաբան Միսակ Վարժապետեանը հետաքրքիր գրառում է արել իր «Հայերը Լիբանանի մէջ» գրքում: Ահա այդ գրառումից մի հատուած.*

*- Թէեւ երաժշտանոցէ մը չէ վկայուած Լեւոն Գաթրճեանը, սակայն զանազան առիթներով բեմերէն, ձայնասփիւռէն, պատկերասփիւռէն ունեցած իր ելոյթներով, իր ձայնին անուշութեամբ եւ հաղորդականութեամբ հասարակութենէն սիրուած ժողովրդական երգիչ մըն է:*

*- Յարգելի պարոն Վարժապետեան, հաճեցէք լուսաբանել, թէ ի՞նչ նկատի ունիք երաժշտանոցէ մը չէ վկայուած ըսելով: Երաժշտանոց չէ յաճախած, թէ՞ ուսումը կիսատ ձգած է, որու պատճառով վկայական չէ ստացած: Պատմութեան համար շատ կարեւոր է ճշդելը: Ես քանի մը տեղ, նոյնիսկ պաշտօնական հաղորդումներու մէջ կարդացի, որ Լեւոնը ուսանած է Պէյրութի պետական երաժշտանոցի մէջ:*

*Սակայն, Լեւոնի պարագային այնքան ալ կարեւոր չէ ուսանած է կամ ոչ: Իր քով ամէն ինչ Աստուծոյ տուածով է: Մենք եւ դուք շատ լաւ գիտենք, կը ճանչնանք «ուսում առած» երգիչներու, որոնք իրենց ողջ կեանքի ընթացքին մէկ մենակատարում իսկ չեն ըրած եւ երգած են երգչախումբերու մէջ: Նոյնը՝ խմբավարներու պարագային, որոնք հինգ տարի ուսանելէ ետք, մանկական երգչախումբ անգամ չեն կրցած ղեկավարել:*

*Հայ իրականութեան մէջ Լեւոն Գաթրճեանը միակ երգիչն է, որի համար **ԵՐԳԻ ԺԱՆՐ** գոյութիւն չունի: Առաւելութիւնը տալով աշուղական երգերի, ոչ պակաս յաջողութեամբ, նրա մօտ փայլուն է ստացւում յեղափոխական եւ ֆիտայական երգերի կա-տարումները, որոնց ընթացքին ունկնդիրը ըմբոշխնում է երգչի հնչուն, գունեղ, առանց տատանումների ձայնի գեղեցկութիւնը:*

*Ուր էլ որ երգել է Գաթրճեանը, որ երկրում, կամ որ սրահում՝ միեւնոյնն է՝ այնտեղ եղել է խինդ, ուրախութիւն, սէր, կարօտ՝ առ հայրենին: Յստակ առոգանութեան եւ կշռադատուած շնչառութեան շնորհիւ նրա կատարած երգերը դառնում են չափազանց մատչելի: Այդ է պատճառը, որ նրա համերգներում կատարուող երգերի զգալի մասը կրկնւում է ունկնդիրների պահանջով:*

*Խորհրդային Հայաստանի պատմութեան մէջ, գրականութեան, արուեստի, մշակոյթի զարթօնքի տարիներն են համարւում 1950-ի կէսից մինչեւ 1980-ի Ղարաբաղեան շարժման սկիզբը, գրեթէ 30 տարի: Ի մասնաւորի 1960-80թ.թ. գրեթէ ամբողջովին բացուեց երկաթեայ վարագոյրը եւ Հայաստան-Լիբանան-Սիրիա կապի շնորհիւ աննախընթաց աճ արձանգրեց Պէյրութի մշակութային կեանքը: Բացուեցին նոր դպրոցներ, մշակութային հաստատութիւններ: Աշխուժացաւ թատրոնի եւ երաժշտախմբերի գոր-ծունէութիւնը:*

*Անշուշտ, այս ամէնը Ստնտու (կաթ տուող կին) Հայաստանի շնորհիւ, որի մտաւորականների, գրողների, Մայր թատրոնի, արուեստագէտների, երաժշտախմբերի. Թաթուլ Ալթունեանի ղեկավարած երգի եւ պարի համոյթի յաճախակի այցելութիւնները մեծապէս նպաստեցին Միջին Արեւելքի հայ գաղթաշխարհի մշակութային վերելքին:*

*Այդ տարիներին Միջին Արեւելքի հայ համայնքների ղեկավարների, Լեւոն Գաթրճեանի, նրա սերնդակիցներ Ատիս Հարմանտեանի, Մանուէլ Մենենկիչեանի, հրաշալի դաշնակահար Ժագ Գոճեանի եւ մի խումբ ազգասէր երիտասարդների անդուլ ջանքերի շնորհիւ ասպարէզից դուրս մղուեցին Թրքաբոյր, այսպէս կոչուած հայկա-կան երգերը: Պուրճ Համուտի սրճարաններում եւ ճաշարաններում յետ այդու միայն մաքուր, ականջ շոյող, ազնիւ երգեր ու երաժշտութիւն է կատարւում*

*Այդ շրջանում էր, որ Լեւոն Գաթրճեանը աշուղական երգերի կողքին իր ծրագիրը հարստացրեց ազգային ոգի արթնացնող յեղափոխական եւ ֆիտայական երգերով:*

*Դրանք էին՝«Ձայն մը հնչեց», «Անդրանիկ», «Զարթիր լաօ», «Հայ ենք մենք», «Ղարաբաղ» եւ այլ երգեր:*

*Սոյն ծրագրով Լեւոն Գաթրճեանը ելոյթներ ունեցաւ Եգիպտոսում, Քուվէյթում, Իրանում, Կիպրոսում, Փարիզի՝ շատերի համար երազ թուացող Օլիմպիա սրահում, Արցախում, բազմիցս Հայաստանում եւ Միացեալ Նահանգներում:*

*Մշտապէս հիւր լինելով Երեւանում, Լեւոն Գաթրճեանը ելոյթներ է ունեցել ռադիոյով եւ հեռուստատեսութեամբ, միեւնոյն ժամանակ ձայնագրել է բազում աշուղական (առաջնութիւնը տալով Սայաթ Նովային), ժողովրդական, յեղափոխական եւ ֆիտայական երգեր, որոնք ձայնապնակի է վերածել Մոսկուայի ձայնապնակներ արտադրող Մելոտիա ընկերութիւնը:*

*Յիսուն տարի Լեւոն Գաթրճեանը կապը բնաւ չի կտրել Լիբանանից,, որի պատճառով նրան համարում են լիբանանահայութեան մենակատար:*

*Պիտի խոստովանել, որ նա իր ելոյթներով չի շփացրել Լոս Անջելէսի հայութեանը, մանաւանդ՝ Հայաստանի անկախացումից յետոյ: Մեր համագործակցութիւնը երկար չտեւեց, ընդամէնը երեք-չորս տարի:*

*40 տարի առաջ ես որոշեցի Բարեգործական Միութեան ՍԱՐԴԱՐԱՊԱՏ երգի եւ պարի համոյթի գործիքային խումբը առանձինն օգտագործել շնորհալի մենակատարների օգնութեամբ հայրենակարօտ հայորդիներին հայկական ժողովրդական, գուսա-նական եւ յեղափոխական երգերին: ծանօթացնելու համար:*

*Արդիւնքում՝ծնուեցին ծրագրային համերգներ, ինչպէս օրինակ «Հայաստանը երգերի մէջ», «Թաթուլ Ալթունեան», «Ինքնուս երգիչներ», «Հաւասի եւ Շահէն», «Սայաթ Նովա» եւն: Այդ համերգներին իրենց մասնակցութիւնը բերին շնորհալի, տաղանդաւոր երգիչ-երգչուհիներ, այդ թւում՝ արական սեռին պատկանող՝ Լեւոն Գաթրճեան, Աշօտ Դուրեան, Հենրիկ Միհրանեան, Յովիկ Գրիգորեան, նոյնիսկ փառահեղ պոլսահայ յայտնի օպերային երգիչ Յակոբ Թոփուզեան: Իգական սեռն իրեն դրսեւորեց անկրկնելի Աննա Նշանեանով, որի կողքին՝ Մարիետա Անասեան, Ալիս Լոմեան: Անշուշտ այս խմբի գլխավերեւում է եղել երկարամեայ գործունէութեամբ ողջ Միջին Արեւելքը, արաբական երկրները, Հայաստանն ու Սփիւռքը «իրենով արած» Լեւոն Գաթրճեանը:*

*Ահա թէ ինչ է գրում երաժշտագէտ Նէլլի Սադոյեանը վերոնշեալ համերգներից «Հաւասի եւ Շահէն» երեկոյի մասին, որը տեղի է ունեցել 1983 թ. Մայիսի 8-ին:*

*-Նորոյթ էր Լեւոն Գաթրճեանի յօրինումները գուսան Հաւասու խօսքերի հիման վրայ (մէկը շատ տարածուած «Եարը մարդուն եարայ կու տայ» երգն է,- ՀԵՆ. Ա.): Երգչի յօրինումները հարազատ էին գուսանի ոճին: Մեղեդին ծորում էր ազատ, իսկ Լեւո՜նը , յիրաւի ծնուած է երգելու համար: Այնքան ազատ է զգում նա իրեն բեմի վրայ, այնպէս արագ է կապւում հանդիսատեների հետ, որոնք ոգեւորութիւնից բազմիցս կրկնել տուին արդէն կատարուած շատ երգեր*

*- Է՜հ Լեւոն, Լեւոն, գնացիր էլի՜, վստահ եմ, կը վերադառնան լաւ օրերը ու մենք նորից կը հանդիպենք, ինչպէս աննման Ջարենցն է ասում.*

*«Էլի գարուն կը գայ, կը բացուի վարդը*
*Սիրեկանը էլի եարին կը մնայ»:*

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* $50,00 * $100,00 (first class) for USA

$ 125,00 (Air Mail) for Canada.

$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: ---------------------------------------

Address: ---------------------------------------

City: --------- State:--------- Zip Code:------

Country: -------------

Tel :------------------------

Email: -------------------------

# Կեանքը Վարդագոյն Ակնոցներով... (Արմէն Անասեանի Համերգը)

ԳՈՀԱՐ ՍԱՀԱԿԵԱՆ



*Ներքոյ նիւթի անուանումը վերցուած է ֆրանսիացի հանճարեղ երգչուհի Էդիտ Պիաֆի հանրայայտ երգի բառերից: Այդ եւ նմանատիպ այլ երգերով, փառայեղ երգչուհին պատերազմից վերադարձած զինուորներին յորդորում էր չվհատուել եւ ապագային նայել «Վարդագոյն Ակնոցներով»:*

*Կասկածից վեր է, որ Սեպտեմբեր 7-ին Հոլիվուդի Կատալինա Ջազ ակումբում (*Catalina Jazz Club*) կայացած համերգում հնչող ստեղծագործութիւններով ջութակահար եւ դիրիժոր Արմէն Անասեանը նպատակադրուած, համերգի ծրագիրը կազմել էր ճիշդ եւ ճիշդ հանճարեղ երգչուհու նման՝յորդորել հային, ուր էլ, որ նա լինի, չվհատուել, երբեք յոյսը չկորցնել ու ապագային նայել Վարդագոյն Ակնոցներով:*

*Իր նպատակին հասնելու համար Արմէն Անասեանը համերգային ծրագրում ընդգրկել էր բացառապէս կարճ, դիւրամատչելի, ականջը շոյող, հաճելի, 3-5 րոպէ տեւողութեամբ 18 գործեր, որոնցից վեցը հայ կոմպոզիտորների գործերից:*

*Շլացուցիչ տպաւորութիւն ստացանք Շառլ Ազնաւուրի* La Boheme *երգի կատարումից: Երգի երկրորդ՝ աստիճանաբար արագացող հատուածում թւում էր թէ ջութակահարն ու դաշնակահար Մարկ Ռոբսոնը մրցումի են ելել իրար դէմ Սակայն այնսայթակ, միաձոյլ կատարման արդիւնքն արժեւորուեց ունկնդիրների խելայեղ ծափողջիւններով:*

*Կիսահայ (մայրն է հայ) ֆրանսիացի կոմպոզիտոր Միշել Լեգրանի «Ես քեզ կ? սպասեմ» գործը Մարկ Ռոբսոնի մշակմամբ, ջութակի մեղմից էլ մեղմ, գործիքի վերին լարերի վրայ ծաւալուող քնքշաբոյր մեղեդին Արմէնը մատուցեց այնպիսի անմեկնելի ապրումով, որ ունկնդրին կարող էր թուալ թէ հենց ինքն է սիրած եարին սպասողը:*

*Ջափազանց սիրուած ու տարածուած է Առնօ Բաբաջանեանի «Նոկտիւրն» դաշնամուրային գործը, որի հիմքում ընկած է Սայաթ Նովայի «Քանի վուր ջան իմ» երգի մեղեդին: Արմէն Անասեանը այդ գործը մշակել է ջութակի եւ դաշնամուրի համար: Անվարան կարող եմ ասել, որ պակաս հաճելի չէ լսել Արմէնի մշակումը, որը կարծեօք աւելի է հարստացրել Սայաթ Նովայի երգը: Երեկոյին կատարուեցին նաեւ Էդուարդ Բաղդասարեանի «Նոկտիւրն»-ը եւ Կոմիտասի «Հոյ Նազան»-ը՝ Արմէնի մշակմամբ:*

*Երեկոյի երկացանկը հարուստ էր օտար կոմպոզիտորների մանրանուագներով: Էլ ֆրանսիացիներ Ռաւել, Դէբիւսի, Ֆորէ, էլ՝ Պոնս, Պիացոլա, Բարտոկ, Զայկովսկի ու Գերշուին:*

*Արմէնի կատարմանը պիտի հետեւել կենտրոնացած, առանց աչք թարթելու, որովհետեւ նա ունկնդրի հետ խօսում է աստուածային երաժշտութեան լեզուով ու երեւան հանում երգահանի հոգու խորխորատներում ամբարուած վիշտը, հայրենաբաղձ կարօտն ու մշտավառ սէրը, սէր՝ մարդու, երկրի եւ հայրենիքի հանդէպ:*

*Արմէն Անասեանի բնատուր տաղանդին ու կատարողութեան վարպետութեանը հաղորդակից լինելու լաւագոյն միջոցը նրա համերգներին ներկայ լինելն է:*

*Անասեանը իր ջութակի կախարդիչ լարերի զօրութեա,մբ կարողանում է ունկլնդրին գամել աթոռին, որովհետեւ, ինչպէս կ? ասէր «Եռանկիւնի» ֆիլմի հերոս ուստա Գադպարը (Մհեր Մկրտչեան)՝ «Ան գիտութիւնով կը չալէ...»: Իսկ թւում էր թէ նա խօսում էր այս օրերի համար բնորոշ՝ հայի վշտի, ցաւի ու կարօտի մասին՝ դիպչելով ամէն մի ունկնդրի հոգու նուրբ լարերին:*

*Արմէն Անասեանը սկզբնական երաժշտական կրթութիւնը ստացել է Երեւանի Սայաթ Նովայի անուան երաժշտական դպրոցում, որից յետոյ սովորել է Գալիֆորնիայի Լոս Անջելէսի Նահանգային համալսարանում, որն աւարտել է ջութակահարի եւ դիրիժորի վկայականով: Երկու տարի կատարելագործուել է Նիւ Եորքում, ուր երկու տարի աշխատել է տեղի նշանաւոր Հոբոկն ճանաչուած սենեկային նուագախմբում՝որպէս մենակատար եւ կոնցեռտմեյստեր:*

*Նիւ Եորքից յետոյ Արմէնը Դոկտորի աստիճան է ստացել Գերմանիայի Ֆրայբուրգ քաղաքի երաժշտանոցում ու տեղի նուագախմբի հետ որպէս մենակատար բազմաթիւ ելոյթներ է ունեցել Եւրոպայի գրեթէ բոլոր նշանաւոր քաղաքներում:*

*1994-98 թ.թ. Արմէն Անասեանը որպէս դիրիժոր եւ մենակատա, աշխատել է նշանաւոր երաժիշտ Եանիի հետ, որից յետոյ, առ այսօր նուագում է Լոս Անջելէսի Օպերային թատրոնի սիմֆոնիկ նուագախմբի առաջին ջութակների կազմում, դէպքից դէպք զբաղեցնելով կոնցերտմեյստերի առաջին աթոռը:*

*Մնում է յիշեցնել, որ Արմէնը ճանաչուած երաժիշտներ Հենրիկ եւ Մարիետա Անասեան ամոլի աւագ որդին է: Ի միջի այլոց, նրանց կրտսեր որդի Արամն էլ է երաժիշտ: Որպէս շնորհալի կատարող, հիմնականում նա մեկնաբանում է հօր երգերը:*

*Շնորհակալական անմնացորդ խօսքս ուղղում եմ տաղանդաւոր (այս բառը չափազանցուած չէ) ջութակահար Արմէն Անասեան եւ դաշնակահար Մարկ Ռոբսոն զոյգի համերգի նախաձեռնող ու կազմակերպիչ Արթուր Միքայէլեանին, որը միայնակ, առանց հովանաւորների ու որեւէ միութեան կամ կազմակերպութեան օժանդակութեան կարողացաւ բարձրարուեստ երեկոյ հրամցնել դասական երաժշտութեան երկրպագուներին:*

*Համերգից յետոյ Արմէն Անասեանի հետ ունեցած մեր զրոյցի ընթացքում յայտնի դարձաւ, որ նա պարբերաբար ելոյթներ է ունենում Եւրոպական երկրներում եւ միայն երկու ամիս առաջ է Ռումինիայի Տիմոշիրա քաղաքում տուած համերգից վերադարձել: Նոյն քաղաքում, ուր ներկայիս մեծաթիւ հայկական համայնք կայ, գալիք տարուայ գարնանը տեղի է ունենալու Հայ Երաժշտութեան փառատօն, որին հրաւիրուած է մասնակցել Արմէն Անասեանը: Վերջինս կատարելու է Արամ Խաչատրեանի ջութակի կոնցերտը եւ որպէս դիրիժոր ղեկավարելու հօր՝ Հենրիկ Անասեանի դուդուկի համար գրած կոնցերտը, որի մենակատարն է ռումինացի դուդուկահար Կոսմին Բալեանը (չշփոթել Բալեանի հետ՝ ԲԱ-ԼԵ-ԱՆ):*

*Վերջին խօսքս Արմէնին.*

Օ~, դու հրաշք Արմէն

Էդ ի՞նչ հոգով ու սրտով ես նուագում,

Որ մեր ցաւոտ ու վշտոտ հոգուն՝

Թարմ ու նոր ուժ ես ներարկում:

# Մայք Յակոբեանի Նկարչական Գիրքին Շնորհահանդէսն ու Նկարներու Ցուցահանդէսը

*Թէքէեան Մշակութային Միութեան Փասատինա-Կլէնտէյլ Մասնաճիւղի կազմակերպութեամբ տեղի պիտի ունենայ Մայք Յակոբեանի նկարչական գիրքին շնորհանդէսն ու նկարներու ցուցահանդէսը՝ Կիրակի, 9 Հոկտեմբեր 2022-ի երեկոյեան ժամը 5:00-ին, Միութեան Ալթատինայի Պէչկէօթիւրեան սրահին մէջ:*

*Գիրքը պիտի ներկայացնէ Տոքթ. Գրիգոր Սիմոնեան: Այս առթիւ տեղի պիտի ունենայ նաեւ խնամքով պատրաստուած գեղարուեստական յայտագիր մը, կատարողութեամբ փորձառու արուեստագէտներու եւ Փասատինայի Պլեռ երկրորդական վարժարանի Հայկական Ճեմարանի ուսանողներուն:*

*Գաղութիս արուեստասէր հասարակութիւնը սիրով հրաւիրուած է այս միջոցառումին, որ տեղի պիտի ունենայ Թէքէեան Մշակութային Միութեան հիմնադրութեան 75 ամեակին նուիրուած տօնակատարութեանց ծիրէն ներս:*



# Անկախութեան Գինը

ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱՒԹԵԱՆ

«Երեքշաբթի, սեպտեմբեր 13-ի կէս գիշերէն քիչ ետք, Ազրպէյճան լայնածաւալ ռազմական յարձակում սկսաւ Հայաստանի եւ Արցախի վրայ: Սաստիկ ռմբակոծումներու թիրախ դարձան հայկական տարածքի քանի մը քաղաքներ եւ գիւղեր: Զոհերու թիւն է՝ առնուազն 49 զինուոր եւ 3 խաղաղ բնակիչ:

Երկու տարի առաջ, խախտելով միջազգային իրաւունքի բոլոր կանոնները, Ազրպէյճան Թուրքիոյ աջակցութեամբ յարձակեցաւ Լեռնային Ղարաբաղի վրայ: Այս անգամ ան կը յարձակի Հայաստանի Հանրապետութեան տարածքին իսկ վրայ: Մենք առանց վարանելու աջակցեցանք ուքրանացի ժողովուրդին, երբ ան ենթարկուեցաւ Ռուսիոյ յարձակման: Նո՛յնպիսի յստակ ձայնով մենք պէտք է դատապարտենք պարոն Ալիեւի վարչակարգին այս գիշեր սկսած ոճրային յարձակումը:

Մեր վճռական դիրքորոշումը կրնայ կանխել այս պատերազմը եւ կրնայ արգելք ըլլալ Ազրպէյճանի՝ իր նախապատրաստած ծրագիրը գործադրելուն:

Վերջ տանք այս ոճրագործ պետութիւնը մեր օրինական գործընկերը նկատելուն, վերջ տանք անկէ կազ գնելով անոր այդ սպառնալիքները գանձատրելուն: Եկէք արագ քայլերու ձեռնարկենք՝ արդիւնաւէտ պատիժներ նախապատրաստելու համար: Եկէք անյապաղ պահանջենք ՄԱԿ-ի Ապահովութեան

Խորհուրդի նիստ: Մենք ատիկա պարտական ենք մեր ցամաքամասի ապահովութեան համար, որ ուղղակի պիտի վտանգուի այս նոր հակամարտութեամբ, բայց յա՛տկապէս, յատկապէս պարտական ենք հայ ժողովուրդին, որուն հետ սրտանց կ՚ապրինք սուգի եւ վշտի այս ժամերը»:

Վերոյիշեալ խօսքերը կը պատկանին ֆրանսացի եւրոերեսփոխան Ֆրանսուա-Զաւիէ Պելամիի, որ բուռն ծափահարութիւններու արժանացած է խորհրդարանի անդամներուն կողմէ:

Վարչապետ Նիկոլ Փաշինեանն ալ իր հերթին Ազգային Ժողովին առջեւ ըսած է հետեւեալը. «Ատրպէյճանի զինուած ուժերը յարձակողական գործողութիւններ են ձեռնարկել Հայաստանի Հանրապետութեան վրայ՝ 4 ուղղութիւններով, հետագայում 2-3 ուղղութիւն էլ աւելացել է: Եւ Ադրբեջանը փորձում է ներկայացնել, թէ այդ գործողութիւնները եղել են ի պատասխան Հայաստանի կողմից ինչ-որ սադրանքների: Բայց պէտք է միանշանակ արձանագրենք, որ այդ տեղեկութիւնը բացարձակապէս կեղծ է եւ սուտ է եւ ընդհանրապէս չի համապատասխանում իրականութեան»:

Իսկ Եւրոպական Խորհրդարանի՝ Հարաւային Կովկասի հետ յարաբերութիւններու պատուիրակութեան ղեկավար երեսփոխան Մարինա Քալիւրանտ հրապարակած է յայտարարութիւն մը, ուր խստօրէն դատապարտած է Հայաստանի դէմ Ազրպէյճանի յարձակումը. «Ես խստօրէն կը դատապարտեմ Ազրպէյճանի՝ Հայաստանի Հանրապետութեան տարածքին գտնուող բազմաթիւ թիրախներու դէմ երէկ գիշերուան լայնածաւալ ռազմական յարձակումը: Տեղեկութիւններ կան սաստիկ հրետանակոծութիւններու եւ անօդաչու սարքերով յարձակումներու մասին, որոնք թիրախաւորած են Սիւնիքի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի հայկական բնակավայրերը՝ պատճառելով դեռ անծանօթ թիւով զոհեր:

Կոչ կ՚ընեմ միջազգային հանրութեան ու մասնաւորապէս Եւրոպական Միութեան՝ յստակօրէն պատասխանելու այս անընդունելի ուժի կիրարկման: «Երկու կողմերուն» զսպուածութեան կոչեր յղող «անատամ» յայտարարութիւններու ժամանակը չէ: Ընդամէնը երկու շաբաթ առաջ էր, որ Ազրպէյճան ու Հայաստան Պրիւքսելի մէջ համաձայնութեան եկան՝ մինչեւ մէկ ամիս սկսելու համար աշխատանքները խաղաղութեան համաձայնագրի բնագրին վրայ: Կոչ կ՚ընեմ Պաքուի՝ չմսխել այս պատմական կարելիութիւնը եւ առանց յապաղումի վերադառնալ բանակցային սեղան»:

Այս յօդուածով բաւականացանք ընթերցողին փոխանցելու յայտարարութիւններ, որոնք լաւագոյնս կը բացատրեն անընդունելի գոյավիճակը, որ կը շարունակէ տանջել մեզ՝ ի տես այն դժբախտութեան, որուն կ՚ենթարկուի մեր ժողովուրդը Հայաստանի եւ Արցախի մէջ՝ մեր բարեկամ ու դաշնակից Ռուսիոյ քթին տակ:

Վերլուծում ընելու ո՛չ տրամադրութիւն մնաց, ո՛չ ալ արժէք:

Եւ ամենայն հայոց բանաստեղծ Յովհաննէս Թումանեանի «Հայրենիքիս հետ» քերթուածէն ընդօրինակելով այս սքանչելի տողերը, կ՚ուզեմ աշխարհի ականջին աղաղակել՝ ըսելով. Ու պիտի գայ հանուր կեանքի արշալոյսը վառ հագած,

Հազա՜ր-հազար լուսապայծառ հոգիներով ճառագած,

Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,

Կենսաժպիտ իր շողերը պիտի ժպտան առաջին,

Ու պոէտներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անէծքով,

Պիտի գովեն քո նոր կեանքը նոր երգերով, նոր խօսքով:

**Norayr Daduryan Armeno-Turkish Translation Services**

From Armeno-Turkish to Armenian and English languages.
Bring your family's history back to life!
Family letters, postcards, diaries, and more...
Please reach out for quotes
Website: norayr.daduryan.com
Email: noraydaduryan@gmail.com

# Ապրելու Կամքը...

ԴՈԿՏ. ՀՐԱՅՐ ՃԵՊԷՃԵԱՆ

Կիրակի Սեպտեմբեր 18, Կիպրահայ գաղութին հետ մասնակցեցայ ժողովրդային հաւաքին, ի զօրակցութիւն հայոց բանակին: Հաւաքը տեղի ունեցաւ Կիպրոս-Հայաստան բարեկամութեան այգիին մէջ, Նիկոսիա:

Շատ քաջալերական էր տեսնել եթէ մէկ կողմէ երիտասարդներ եւ չափահասներ, բայց նոյնքան նաեւ պատանիներ:

Շատ դժուար եւ մարտահրաւէրներով լեցուն օրերու մէջ ենք որպէս հայկական իրականութիւն: Եթէ մեր մտքերուն եւ սրտերուն մէջ կայ մտահոգութիւն, անորոշութիւն, բայց նոյնքան նաեւ տրտմութիւն: Տրտմութիւնը մեր քաջարի երիտասարդ տղոց նահատակութիւնն է: Իսկ անորոշութիւնը՞...: «Լինելու եւ չի լինելու» պատերազմին մէջ ենք...:

Եթէ մէկ կողմէ կը հետեւէի Սրբազան Հօր եւ պետական ներկայացուցիչի պատգամներուն, բայց նոյնքան նաեւ կը նայէի չորս կողմս: Կը դիտէի մանաւանդ մեր պատանիները: Անոնք մէկ կողմէ հպարտօրէն կը ծածանէին հայկական դրօշակը եւ միւս կողմէ պաստառներ: Եւ այս բոլորին մէջէն տեսայ մէկ իրականութիւնը: ԿԱՄՔԸ...

Հայուն պատմութիւնը միշտ ալ լեցուն եղած է տագնապներով: Կարծէք տագնապները «կարաւանի» մը նման, մէկ-մէկ, մեր ետեւէն եկած են մեր կեանքերուն ընթացքին: Բայց այդ բոլոր տագնապներուն մէջէն մենք ցոյց տուած եւ դրսեւորած ենք մէկ իրականութիւն: Ապրելու Կամքը:

Մենք ազգ մըն ենք որ ունեցած է եւ տակաւին քաղաքակրթութիւն մը որ հազարամեակներու վրայ երկարած սատարած է միջազգային եւ համամարդկային կեանքերու յառաջխաղացքին: Մեր պատմութեան բոլոր տագնապներուն մէջէն դրսեւորած ենք կամք եւ վերածած զայն ապրող իրականութեան: Ապրած ենք ոչ թէ աննպատակ, այլ նպատակասլաց: Իսկ նպատակը: Կեանքը կերտել եւ զայն ապրիլն է: Եթէ ապրած ենք ու տակաւին որպէս հայ ժողովուրդ՝ բայց նաեւ բաժնեկցած զայն համամարդկային իրականութեանը մէջ:

Այսօր, այս հաւաքի ընթացքին, ես նորէն տեսայ այս կամքը: Կամքը հայ պատանիին, երիտասարդին եւ չափահասին: Իմ եւ մեր բոլորին կամքը: Եթէ մեր հայ քաջարի բանակին տղաքը կը կռուին եւ կը նահատակուին, քանի կուզեն ամուր պահել հայուն ապրելու կամքը:

Եւ այս ապրելու կամքով մենք պիտի դուրս գանք այս անգամ ալ այս ճգնաժամէն՝ որքան որ այս ճգնաժամը «մահուան շուքի ձորի» մէջէն քալելու իրականութիւնն է: Այս կամքը մեզ զօրաւոր պահած է (ու տակաւին այսօր պիտի ընէ նոյնը)՝ որ «չարէն չի վախնանք»:

Բայց այսօրը ունի նաեւ պարտականութիւն եւ պարտաւորութիւն:

Այս ճգնաժամէն դուրս պիտի գանք «բոլորս» եւ «միասին»: Իսկ բոլորս՞ եւ միասին՞: Ես, դուն եւ իւրաքանչիւր հայ: Բոլորս եւ միասին:

Մեր հայ բանակին եւ անոր նահատակ տղոց արեան կանչն է այս:

Հայուն ապրելու կամքը:

Յարգանք մեր հայ բանակին եւ անոր իւրաքանչիւր կռուող թէ նահատակ քաջամարտիկներուն:

Ապրինք եւ (վեր)ստեղծենք հայուն ապրելու այս կամքը:

Ապրելու կամքը...: Բոլորս եւ Միասին:



# Բեթէլ Վարժարանէն Ներս Անմոռանալի Երկու Տարիներս

«Ինչ որ չի գրուիր կը մոռցուի...» Ռ. Յատտէճեան

«Գոց դրան ետեւ կեանք մ՛ամբողջ բանտեր եմ, Գիրքեր ծրարեր՝ դրեր արկղին մէջ խուլ մոռացութեան:» Վարուժան Աճէմեան

ԶԱՐՄԻՆԷ Գ. ՊՕՂՈՍԵԱՆ

*Յառաջիկայ տարի 2023-ին, Հալէպի Հայ Աւետարանական Բեթէլ վարժարանը պիտի դիմաւորէ իր դարադարձը: Եղեռնէն վերապրած ծնողքի զաւակ մօրս ծնած տարին՝ է նաեւ 1923-ը, որ եղեռնէն հազիւ 15 տարի անց այս վարժարանը իր դռները կը բանայ Սիպիլի վրաններէն, կիւրինցիներու, գէյթունցիներու քէմբերու մէջ գոյութիւն պահպանած հայ ընտանիքներուն զաւակները ուսման կեդրոնի մը երդիքին տակ հաւաքելու:*

*1959-61 թուականներուն ալ իր դռները ինծի համար բացաւ այս վարժարանը, ուր կեանքիս բախտորոշ մէկ շրջանին իմ անցուցած երկու տարիները իր յատուկ տեղը գրաւեցին: Հազիւ պատանեկան տարիներու սահմանին էի, ամէնէն դժուարին տարիներն էին կարծեմ, որ պարտադրուած էի ապրելու ծնողքէս հեռու՝ մեծ հայր մեծ մայր, քեռի եւ քեռկինի հետ:*

*Ազէզի Սահակեան վարժարանի նախակրթարանի վեցերորդէն վկայուած էի արդէն փայլուն նիշերով՝ «Քաջալաւ եւ խաչ մըն ալ աւելի» վկայականիս էջին վրայ կը փայլէր, մօրս բաւարարութիւն տուած ըլլալու համար կարծես, որովհետեւ քննութիւններուս կամ գրաւորներուս պարզ միմիայն 100 թուանշանը բաւարար չէր, այլ՝ ան բան մը աւելի, գրաւոր գնահատական մըն ալ կ՛անկալէր բարձր թիւին քով:*

*Այդ տարիներուն մեր ընտանեկան պայմանները տակաւին չէին ներեր, որ ընտանեօք Ազէզէն կարենայինք Հալէպ փոխադրուիլ: Հայրս մօրս հետ փսփսուքով կը խօսէր թէ «այս-ինչեանները» հետաքրքրուած են ինձմով եւ «աղջիկտես»-ի գալ կ՛ուզեն... մօրս ձայնը երկինք կը բարձրանար, հօրս սպառնալու թէ ոչ մէկը իրաւունք ունի մեր տունը ,աղջիկտեսե ի գալու: «Զարմինէն պիտի ուսանի» կ՛ըլլար իր վճռական ու անդրդուելի պատասխանը: Սակայն հօրս կրկնուող փաստ-զէնքն ալ միշտ նոյնն էր յիշեցնելու մօրս թէ ինք ալ հազիւ 15 տարեկան էր երբ ամուսնացած էր հօրս հետ: Աւելին՝ հազիւ 16 տարեկանին ալ մայրացած էր անդրանիկ մանչ զաւակով մը...*

*Անշուշտ Ազէզի մէջ հայկական միջնակարգ կամ երկրորդական վարժարան չկար, որ կարենայի ուսումս շարունակել տեղւոյն վրայ: Երէց եղբայրս Զաւէնը, Անթիլիաս-Դպրեվանք ղրկուած էր հազիւ 13 տարեկան հասակին: Մայրս մէկ տարի մեր տան մէջ օրօրեց գլխ կար կարել տալով, կարի մեքենայ գործածելը սորվեցնելով, ասեղնագործի տեսակները, բուրդի գործ, քրոշէ եւ այլ տեսակաւոր գործեր աշխատիլ սորվեցնելով իրեն իւրայատուկ ստեղծագործ ձեւերով: Երբ ձեռագործերուս նմոյշները պատրաստ էին, հօրս յաղթականօրէն ըսաւ թէ տանտիկին ըլլալու համար ամէն բան սորվեցուցած է ինծի, կը մնայ աւելի բարձր ուսման ղրկել զիս:*

*Ես սակայն, պէտք է խոստովանիմ որ, ձեռագործէն կամ տան մաքրութենէն փախուստի պահերս ունէի: Գաղտնաբար գիրք մը առնելով «կորսուելու» պահերս էին անոնք, մահճակալին ետին եւ կամ՝ մեզի համար արգիլուած, դուռը միշտ փակ հիւրասենեակին մէկ անկիւնը, լռութեան մէջ կարդալու, մինչեւ որ մայրս բացակայութեանս անդրադառնալով զիս գտնէր եւ վերստին գործի լծէր:*

*Երէց եղբօրս Լիբանանէն բերած կամ ղրկած գիրքերը ինծի մխիթարանք էին, առօրեայէս ուրիշ աշխարհ մը փոխադրուելու: Երեւակայական մտերիմներս էին Վազգէն Շուշանեան, Ակսել Բակունց, Վահան Թոթովենց, Գուրգէն Մահարի առօրեայիս ամէնէն սիրելի ու հաճելի պահերուս: Վազգէն Շուշանեանին սիրոյ նամակները հոգիս կը խռովէին երազանքներով, Ակսել Բակունցի կապոյտ աչքերուն սիրահար՝ կ՛ըմբոշխնէի Ալպիական Մանուշակին մէն մի տողը: Թոթովենցին Հին Հռոմէական ճանապարհը փոխադրըւած կը տեսնէի մեր դրան առջեւէն երկարող «Ազէզի միակ Տեմիրօլ»-ին ասֆալտապատ ճամբուն վրայ, ուրկէ Թրքական սահմանէն Սուրիա մտնող ուխտաւորները դէպի Հալէպ եւ հոնկէ ալ մահմետականներուն ուխտատեղին՝ Մեքքէ կը տանէր:*

*Երկար խօսակցութիւններ է, չըսելու համար տաք վիճաբանութիւններէ ետք՝ մեծմօրս միջամտութեամբ ծնողքս երկուստեք համաձայնելով որոշեցին, որ ես Հալէպ երթամ, իրենց հետ մնամ ուսումս շարունակելու: Երէց մօրաքրոջս զաւակները Հալէպի Բեթէլ Վարժարան կը յաճախէին, ես ալ անոնց հետ կրնայի միեւնոյն դպրոցը երթալ:*

*Կը մնար թէ ո՞ր դասարան պիտի ընդունուէի: Նախակրթարան վեցերորդ աւարտած, մէկ տարի ալ «առանց դպրոցի տունը մնացածս», օրէնքով ութերորդ դասարան պէտք էր արձանագրուէի: Բարեբախտաբար Նախակրթարանի դասարանիս «փոքրերէն» էի երբ աւարտեցի: Սակայն Ազէզի Սահակեան Վարժարանի ուսման մակարդակը թերագնահատելով, մանաւանդ արաբերէն լեզուի մակարդակը, որոշեցին զիս հինգերորդ դասարան «նստեցնել», մանաւանդ որ մենք բոլոր նիւթերը հայերէնով սորված էինք, արաբերէնը ձեւականօրէն օրական մէկ պահ էր միայն:*

*Ե՞ս, հինգերորդ դասարա՞ն, կրկնե՞լ: Բեթէլ վարժարանի Տնօրէնութեան սենեակին մէջ կենալով հինգերորդ դասարանցի ըլլալը մերժելուս այդ պահը, կեանքիս իսկապէս մէկ ողբերգական պահը նկարելու համար պէտք էր նկարիչ մը ունենայի, զիս իմ ապրումներուս հետ, աղիողորմ արցունքներովս նկարելու:*

*Տասնամեակներ անցած են այդ պահէն, սակայն մինչեւ հիմա կը զարմանամ թէ ես ամօթխածս ի՞նչպէս կրցայ ինքզինքս պաշտպանելու համար ճիգ գործադրել օրուայ Տնօրէն՝ Պարոն Լութֆի Հայտօսթեանին ըսելուգգգ*

*- Պարոն Տնօրէն, ես այդ բոլոր դասերը առած եմ, եւ շատ բարձր նիշերով ՎԵՑԵՐՈՐԴԷՆ շրջանաւարտ եղած եմ ... եւ կը շեշտէի վեցերո՛րդը...*

*- Աղջիկս բայց արաբերէնդ շատ տկար է...*

*- Դուք ինծի գոնէ վեցերորդ դրէք գգգ եթէ լաւ նիշեր չկարենամ բերել գգգ այն ատեն զիս հինգերորդ տարէքգգգ*

*- Աղջի՛կս, մէկ եռամսեակ ետք վիճակացոյցիդ մէջ եթէ յաջող նիշեր կարենաս ստանալ, ես խօսք կու տամ, որ քեզ կը տանիմ վեցերորդ դասարան... աւելի պատուաբեր է բարձրանալը... քան թէ վերէն վար իջնելը, շատ աւելի ամօթալի է ...*

*Կը մնար հինգերորդ դասարանցի աշակերտ-դասընկերներուս աչքին առաջ «դասարանը կրկնած» նոր աշակերտի հանգամանքով դիմանալ ինծի ուղղուած ոմանց խղճահար, ոմանց չփացած վերէն վար նայող նայուածքներուն, կամ ականջիս հասնող փսփսուքներուն... «Գիւղէն եկած է ... դասարանը կը կրկնէ»:*

*Դասարանէն տղայ մը, կարծես չէր հանդուրժեր իմ ներկայութիւնս այդ դասարանին մէջ... եւ գրեթէ ամէն մէկ ուսուցիչին կրկնած էր այս հարցումը...*

*- Այս նոր աղջիկը, ի՞նչ գործ ունի մեր հինգերորդ դասարանին մէջ: Խոփ-խոշոր աղջիկ է... արդէն ձեր ըսածներուն ալ չի հետեւիր, միշտ դարակին մէջ բան մը կը պահէ..*

*Օր. Կատարինէն, եղելութեան գիտակից ու հոգատար ուսուցչուհին, պաշտպանութեանս կը հասնէր սաստելով զինք-*

*- Ատիկա քու գիտնալիքդ չէ... տեղդ նստէ՝, եւ փորձէ գոնէ Զարմինէին հասկցածին չափ հասկնալ...*

*- Բայց Օրիո՞րդ, ձեզմէ գաղտնի ուրիշ գիրք կը կարդայ...*

*- Տեղդ հանգիստ նստէ՛... անիկա գիտէ ինչ կ՞ընէ, գիտեմ որ զիս մտիկ կ՛ընէ...*

*Անշուշտ շատ շոյուած կը զգայի, որ կրցած էի այսպիսի համարումի տիրանալ, այն ալ Օրդ. Կատարինէին կողմէ: Իրականութիւն կար այո՛: Դասերուն մեծ մասը ինծի կրկնութիւն ըլլալով գաղտնի գիրք կը պահէի դարակիս մէջ, աչքերս վար, գիրքիս կէսը դարակէս դուրս, դէպի գիրկս կը պահէի ընթերցելու երբ ուսուցիչին ուշադրութիւնը իմ կողմս չէր:*

*Այս հաստատագրին կ՛աւելնար մէկ այլ փորձառութիւն եւս, որ ինքնավստահութեան շեշտ մը կու տար ինծի իմ ամբարած գիտելիքներուս կապակցութեամբ: Տիկին Ռոզան հինգերորդի Հայերէնի ուսուցչուհին էր, զիս իր տունը կը հրաւիրէր, որ Հայերէն գրաւորներու սրբագրութիւնները ընելով իր գործը թեթեւցնեմգգգ դասընկերներուս հայերէն լեզուի նիշերուն կը ծանօթանայի իրենցմէ առաջ...*

*Պէտք է խոստովանիմ նաեւ թէ հրաշալի խղճամիտ ուսուցիչներու գուրգուրանքը վայելեցի: Հինգերորդ դասարանէն յատկապէս Օրդգ Կատարինէ Սեմերճեանը, Տիկին Ռոզա Վարպետեանը, Պարոն Յովսէփ Եագուպեանը - իւրաքանչիւրը իր յատուկ յուշը դրոշմած է հոգիէս ներս:*

*Կը յիշեմ անգամ մը Պրն. Յովսէփ Եագուպեանը դասարանին մէջ, կարծես մեր կեդրոնացումը քննելու համար, մեզի կարդաց Վախթանգ Անանեանի որսորդական գիրքէն «Բալքի հենց լաւը դա է» պատմուածքը: Մեր ձեռքերը գրասեղանին վրայ, առանց թուղթ մատիտի, պէտք էր ուշի ուշով մտիկ ընէինք իր կարդացածը եւ յետոյ մեր լեզուով մեր հասկցածին չափ վերապատմէինք այդ պահուն:*

*Ես որ 10-11 տարեկանէս Գուրգէն Մահարի, Ակսել Բակունց, Վահան Թոթովենցին սիրահարած էի, գրեթէ նոյնացած անոնց պատմածներով, ոչ միայն արեւելահայերէնի վարժ էի այլ նաեւ յանդգնեցայ կրցածիս չափ արեւելահայ ուղղագրութիւն պահպանելով վերարտադրել պատմութիւնը:*

*Պարոն Յովսէփը զիս քովը կանչեց զարմանքով եւ փաղաքշական շեշտով մը ըսելուգգգ*

*- Ուրախ եմ որ ճիշդ պատմութիւնը գրած ես, բայց լաւ կ՛ըլլայ որ մեր արեւմտահայ ուղղագրութիւնը պահպանեսգ*

*-Պարոն, եթէ կ՛ուզէք հիմա անմիջապէս կրնամ փոխել եւ ետ ձեզի տալ ըսի- մեքենաբար*

*- Գիտե՛մ, գիտեմ կրնաս ... բայց ոչ հիմա, յաջորդին նկատի առ....*

*****

*Սեպտեմբերէն Դեկտեմբեր ամիսները գլորեցան եւ ես սրտի տրոփիւնով անհամբեր կը սպասէի առաջին եռամսեակի վիճակացոյցիս: Գրաւորներու նիշերէս եւ ուսուցիչներուն վերաբերմունքէն մօտաւոր գաղափար ունէի, որ պէտք էր կարենայի յաղթականօրէն երթալ Պարոն Տնօրէնին ակնկալածը ցոյց տալու: Բայց՝ ձեռքիս փաստ պէտք էր ունենայի:*

*Երգի դասատու Օրդ. Ժօզէֆինը իր գեղեցիկ ձայնով կը սիրէինք, Օրդ. Պայծիկը իր գեղեցիկ, փայլուն սեւ մազերով եւ հայկական աչքերով գրաւիչ հայուհի մըն էր, որ Պարոն Ռեմզիին ալ, արաբ մարզանքի ուսուցիչին, հետաքրքրութեան առարկայ դարձած էր եւ մեզ պատանիներուս առիթ տուած էր որ քառեակ մը հիւսէինք իրենց կարծեցեալ սիրոյն շուրջ... եւ ի՞նչ համարձակութեամբ իրարու փսփսալու...*

Պարոն Ռեմզիկը,
Սիրեց Պայծիկը, Սեղմեց... ,
Խմեց կաթիկը...

*Անմեղութիւնը այդ տողէն անդին չէր երթար... հոն կը վերջանար: Վերջ ի վերջոյ մեր այդ տարիքի տղոց գիտելիքը այդքան էր, որ մամայէն կաթ կը խմեն...*

*Տօնական օրերը կը մօտենային, ճակատագիրս պիտի որոշուէր: Ես անհամբերս, կը սպասէի եռամսեակի աւարտին:*

*Ծննդեան տօներէն առաջ, Դեկտեմբերի կիսուն վիճակացոյցը ձեռքիս երբ տեսչարանէն ներս հրաւիրուեցայ, Տնօրէնը արդէն քթին տակէն կը ժպտէր...*

*Տնօրէն Լութֆի Հայտօսթեանը գիտէ՛ր թէ ինչու հոն էի...*

*- Արձակուրդէն վերադարձին վեցերորդ դասարան կ՛երթաս, դասագիրքերդ պատրաստէ... ըսաւ հայրական շեշտով մը ուսս շոյելով:*

* * * *

*Վեցերորդ դասարանէն յիշողութեանս մշուշոտ պաստառէն միայն Օրդ.գ Ֆերիտէին պայծառ ներկայութիւնը մնացած է: Անգլերէն լեզուի դասապահերուն հետ նաեւ Հայերէն լեզուի դասապահերուն պատասխանատուն էր: Անգլերէն մեր բառամթերքին հետ ուղղագրութիւնը զօրացնելու համար ամբողջ դասարանով ոտքի կը շարուէինք դասարանին երկայնքին ու լայնքին բոլորաձեւ շրջանակ մը կազմելով: Օրդ. Ֆերիտէն երբ բառը կ՛արտասանէր հերթով մէկ առ մէկ մեզ մատնացոյց ընելով, անմիջապէս պէտք էր իմաստը տայինք եւ հեգէինք: Հազիւ մէկ տառասխալ*

Շար.ը էջ 19

## Կայացաւ Սիեթըլի 5-րդ Ամենամեայ Հայկական Փառատօնը



*Սեպտեմբերի 17-ին Սիեթըլի Սբ. Յարութիւն եկեղեցու բակը սովորականից աւելի մարդաշատ էր:*

*Հաւաքուել էին տեղի հայ համայնքի բազում ներկայացուցիչներ, հայկական մշակոյթի, ազգային խոհանոցի, ձեռագործ իրերի հարիւրաւոր սիրահարներ: Ներկաների շարքերում կարելի էր հանդիպել նաեւ այլ ազգի ներկայացուցիչների, որոնք, նկատելով եկեղեցու բակում տեղի ունեցող աշխուժութիւնը, որոշել էին, պարզապէս, տեսնել, թէ ինչ է կատարւում. իսկ կատարւում էր այն, ինչին շատերը երկար էին սպասել ու նախապատրաստուել. մեկնարկել էր Սիեթըլի 5-րդ ամենամեայ հայկական փառատօնը:*



*Հայկական փառատօնն արդէն դարձել է գեղեցիկ ու կարեւոր աւանդոյթ, որն ամէն տարի փորձում է իր շուրջը համախմբել հարիւրաւոր հայերի եւ ոչ միայն: Փառատօնի նպատակն է վառ ու անսասան պահել հայկական ոգին ու ազգային դիմագիծը:*

*Այս տարի փառատօնի շրջանակում ներկայացուեցին հայկական տարբեր պիցնեսներ, որոնք ներկայացնում էին ձեռագործ իրեր, զարդեր, քաղցրաւենիք, հայկական չիր ու չամիչ:*

*Այս տարի եւս փառատօնը սատարողների պակաս չունէր: Տարիների ընթացքում յաջողուել է ձեւաւորել հովանաւորների լայն շրջանակ, որոնք դարձել են նաեւ փառատօնի ընկերները:*

*Փառատօնի մեկնարկն ազդարարեց Սուրբ Յարութիւն եկեղեցու հոգեւոր հովիւ արժանապատիւ Տէր Վազգէն քահանայ Պօյաճեանը:*

*Փառատօնային ծրագիրը, Հայաստանում տեղի ունեցող վերջին դէպքերից ելնելով, ենթարկուել էր որոշակի փոփոխութիւնների. ծրագրից դուրս էին բերուել բեմական կատարումները, երգն ու պարը: Այդուհանդերձ, յաջողուեց պահպանել միջոցառման շունչն ու գլխաւոր ուղերձը՝ լինել միասնական ու լաւատես:*

*Առաւօտից երեկոյ փառատօնի այցելուները հնարաւորութիւն ունեցան զբօսնելու տաղաւարներով՝ կատարելու փոքրիկ գնումներ, համտեսելու հայկական աւանդական խորոված ու փախլաւան: Փառատօնի կազմակերպիչները մտածել էին իւրաքանչիւր դետալ, որպէսզի ոչ մի այցելու իրենց անտեսուած չզգայ: Օրինակ, երեխաների համար ստեղծուել էին յատուկ տաղաւարներ, որտեղ նրանք կարող էին հետաքրքիր ժամանակ անցկացնել՝ խաղալ, ներկել ու նկարել, իսկ մեծահասակները հնարաւորութիւն ունէին խաղալու շախմատ ու նարդի:*



*Փառատօնի հրաւիրեալ պատուաւոր հիւրերի շարքում էր ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի զինուած ուժերի գործերով յանձնաժողովի նախագահ՝ Ադամ Սմիթը: Վերջինս հոգեւոր հովիւ արժանապատիւ Տէր Վազգէն քահանայ Պօյաճեանի առաջնորդութեամբ նախ այցելեց եկեղեցի, ապա հանդէս եկաւ ողջոյնի խօսքով, որտեղ անդրադարձաւ նաեւ Հայաստանում տեղի ունեցող դէպքերին.«Երբ օր առաջ Հայաստանը Ատրպէյճանի կողմից յարձակման ենթարկուեց, կոնֆլիկտը շարունակւում է, կեանքեր են կորսւում, եւ մենք պէտք է աշխատենք սատարել հայ ժողովրդին՝ խաղաղութեան հաստատման գործում»,-նշեց Ադամ Սմիթը:*

*Մինչեւ ուշ երեկոյ մարդկանց հոսքը չէր դադարում, ինչը վկայում է, որ փառատօնն, իսկապէս, սպասուած էր ու ստացուած:*

## Օրուայ Խորհուրդը



*ԱՄՆ Արեւմտեան Թեմի առաջնորդանիստ Սրբոց Ղեւոնդեանց մայր տաճարի հովանու ներքոյ մանուկներին կրթում, սովորեցնում են ոչ միայն մեր ոսկեղենիկ մայրենին, ծանօթացնում են ոչ միայն մեր գրականութեան գոհարներին, այլ նաեւ կարեւորում են աշակերտների հայեցի դաստիարակութիւնը, արմատներին հաւատարիմ մնալու հաստատակամութիւնը, ինքնութեան պահպանութեանը:*

*2022 թ-ի Սեպտեմբերի 24-ն սկսուեց սովորականի պէս. եկեղեցու դռները բացուեցին աշակերտների առջեւ: Բայց, հարկ է խոստովանել, որ օրուայ խորհուրդն այլ էր: Երեխաները ձեռքերին ունէին ծաղկեփնջեր, որոնք խոնարհելու էին քառասունչորսօրեայ պատերազմի, մերօրեայ հերոսների համար կանգնեցուած յուշաքարի առջեւ, որը խորհրդանշում է մեր ազատատենչ ոգին ու հայրենիքի անկախութեան համար մղուող յաւերժ պայքարը:*

*Բացման խօսքով հանդէս եկաւ արժանապատիւ Տ. Խաժակ քահանայ Շահբազեանը: Երեխաների հետ արդէն աւանդական դարձած զրոյցի յիշատակեց օրուայ խորհուրդը՝ Սուրբ Գէորգի տօնը, ով անմահացաւ եւ սրբադասուեց՝ պայքարելով յանուն մեր հաւատի:*

*Սրբի մղած պայքարն այսօր էլ շարունակական է. այսօր էլ մեր հայ զինուորը պայքար է մղում յանուն մեր հաւատի, մշակութային բարձր արժէքների պահպանման եւ մեր արեան գնով ձեռք բերուած ազատութեան, մեր լինելիութեան համար:*

*Անկախութիւնը բացարձակ արժէք է, որի համար մենք դարեր շարունակ պայքարել ենք ու պայքարում ենք մինչեւ օրս:*

*Առաւօտեան պատգամի ընթացքում անուանակոչութեան օրուայ առթիւ շնորհաւորեցին բոլոր ներկայ Գէորգներին: Սա նշան է այն բանի, որ սփիւռքում հայ ծնողները կարեւորում են իրենց արմատներին հաւատարիմ մնալը՝ երեխաներին կոչելով սրբերի եւ հայկական արմատներ ունեցող անուններով:*

*Սա մի վառ օրինակ է, որ մեր սաների ոգում շարունակում են ապրել մեր անմահ հերոսները, որոնց անուններին համարժէք իրենք շարունակելու են պայքարել յանուն անկախութեան, յանուն մեր մայրենիի եւ յանուն մեր պայծառ ապագայի:*

*Ապա Արեւմտեան Թեմի շաբաթօրեայ դպրոցների հոգեւոր տեսուչ, «Փոքրիկ հրեշտակներ» շաբաթօրեայ դպրոցի տնօրէն, բարեշնորհ Յովհաննէս սարկաւագ Գումրույեանը, ամփոփեց օրուայ խորհուրդը, որից յետոյ ուղղորդեց աշակերտներին դէպի եկեղեցու բակ, որտեղ գտնուող յուշաքարի առաջ երեխաները ծաղիկներ խոնարհեցին՝ այն ըմբռնմամբ, որ գոյամարտը շարունակւում է, իսկ վաղուայ պայքարի յաղթական հերոսները հենց իրենք են:*

*Արարողութեան աւարտից յետոյ երեխաները վերադարձան իրենց դասարանները, որտեղ եւս խօսուեց ՀՀ Անկախութեան խորհրդի ու երէկուայ ու այսօրուայ մեր հայրենիքի դժուարութիւնների մասին:*

*«Փոքրիկ հրեշտակներ» դպրոցը միշտ էլ միտուած է եղել Հայաստանի եւ Սփիւռքի կապի ամրապնդմանը, մայրենիի նկատմամբ հաւատարմութեան եւ սիրոյ դրսեւորմանը, ինչպէս նաեւ Հայրենիքին անվերապահ ծառայելու, նուիրուելու ազնուագոյն կոչմանը:*

ՍՈՆԱ ԳԷՈՐԳԵԱՆ
(Ուսուցչուհի)

# Վազգէնեան Հոգեւոր Դպրանոց՝ Հոգու Եւ Մտքի Դարբնոց



Սեւանի Վազգէնեան Հոգեւոր Դպրանոցում սկսուեց 2022-2023թթ. ուսումնական տարին: 32-րդ տարին է, ինչ Դպրանոցը բացում է իր հիւրընկալ դռները ճեմարանականների համար: Այս նոր ուսումնական տարին իւրայատուկ է, քանի որ Գէորգեան Հոգեւոր Ճեմարանի ննջարանային մասնաշէնքի վերանորոգութեամբ պայմանաւորուած՝ Դպրանոցում պէտք է իրենց ուսումը շարունակեն Գէորգեան Հոգեւոր Ճեմարանի սաները: Երկու ճեմարանները՝ միասիրտ եւ միախորհուրդ դարձած, պէտք է կրթեն մեր ապագայ զինուորեալ հոգեւորականաց դասը: Այսօր ԳՀՃ եւ ՍՎՀԴ տեսուչն է Հոգեշնորհ Տ. Շահէ ծայրագոյն վարդապետ Անանեանը: Մի մեծ ընտանիք, պատրաստ եւ հաւատարիմ իր ամենամեայ առաքելութեանը, շարունակելու է սնուցել մեր Մայր Եկեղեցին եւ Հայրենիքը ազգանուէր, ծառայասէր ու խելացի նորանոր հոգեւորականներով: Ճեմարանը մեր Հայոց եկեղեցու բաբախող զարկերակն է եւ Հայրենիքի հոգեւոր կեանքի շունչն ու հոգին:

Գէորգեան հոգեւոր ճեմարանի անբաժան մասնիկն է Սեւանի Վազգէնեան Հոգեւոր Դպրանոցը. այն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարձրագոյն ուսումնական հաստատութիւններից մէկն է: Դպրանոցը հիմնադրուել է 1990թ. Արարատեան Հայրապետական Թեմի առաջնորդական տեղապահ Գարեգին արք. Ներսիսեանի (այժմ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոս) կողմից եւ Վազգէն Ա. Վեհափառ Հայրապետի օրհնութեամբ: 1994թ. Սեպտեմբերի 2-ին՝ չորրորդ ուսումնական տարուայ բացման արարողութեան ժամանակ, ի պատիւ իր հոգեւոր հօր՝ Վազգէն Վեհափառի, Գարեգին սրբազանը Դպրանոցն անուանում է «Վազգէնեան»: 1996թ.՝ Գարեգին Ա երջանկայիշատակ Հայրապետի գահակալութեան շրջանին, Դպրանոցը տուել է իր առաջին հունձքը՝ 9 շրջանաւարտներ: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինութեամբ եւ հայրախնամ օրհնութեամբ 2002թ. Սեպտեմբերի 14 - ին բացուեց Վազգէնեան Հոգեւոր Դպրանոցի չքեղազարդ նոր կացարանային համալիրը, 2004թ.-ից ուսանողները հաստատուեցին նոր ննջարանային մասնաշէնքում: Վերանորոգուեց նաեւ Խրիմեան Հայրիկի ժամանակ կառուցուած ուսումնական մասնաշէնքը: 2005թ. ամավերջին՝ Սուրբ Ստեփանոս Նախավկայի տօնին, ձեռամբ Կոտայքի Թեմի առաջնորդ Տ. Առաքել արք. Քարամեանի (1993-1994թթ. եղել է Դպրանոցի տեսուչ), օծուեց Դպրանոցի բակում գտնուող Սուրբ Յակոբ Մծբնայ եկեղեցի-մատուռը:

Դպրանոցում ուսումնառութիւնը տեւում է չորս տարի, որից յետոյ ուսանողներն իրենց կրթութիւնը շարունակում են Գէորգեան Հոգեւոր Ճեմարանում: Ուսումնառութիւնը Դպրանոցում անվճար է՝ գիշերօթիկ, ցերեկային, առկայ հիմունքներով: Այստեղ սաներն ապահովւում են գրենական պիտոյքներով, հագուստով եւ բժշկական օգնութեամբ: Դպրանոցում դասաւանդւում են ինչպէս հոգեւոր եւ աստուածաբանական, այնպէս էլ հումանիտար եւ լեզուաբանական, մասնագիտական առարկաներ: Այստեղ դասաւանդում են հայաստանեան լաւագոյն դասախօսներն ու մասնագէտները, ինչպէս նաեւ ուսեալ եւ արտասահմանում կրթութիւն ստացած հոգեւորականներ: Ճեմարանական ուսումը բարձրորակ է եւ մրցունակ: Դպրանոցում կատարուել են գիտական, գրական եւ թարգմանական աշխատանքներ: Այսօր էլ սաներն իրենց մասնակցութիւնն են բերում տարբեր գիտամշակութային ժողովներին, ինչպէս նաեւ Դպրանոցում կազմակերպւում են մարզական, գրական եւ գիտական միջոցառումներ ու սեմինարներ:

Կրթօճախում սաները թրծւում ու բովւում են ոչ միայն մարմնապէս եւ մտքով, այլեւ հոգով: Ժամասացութիւնն ու Սուրբ Պատարագը ճեմարանականի անբաժան եւ կարեւորագոյն մասնիկն են կազմում: Աղօթող եւ մտաւորական հոգեւորականներ է պատրաստում ճեմարանը: Այսօր էլ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրական խնամքի եւ ուշադրութեան ներքոյ են գտնւում հոգեւոր-կրթական բարձրագոյն ուսումնական հաստատութիւնները: Վազգէնեան դպրանոցը Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեսլականն էր, որ կեանքի կոչուեց, կայացաւ, հասակ առաւ եւ հաստատուեց իր սուրբ կոչման եւ ուխտի մէջ: Յընթացս Վեհափառ Հայրապետի գահակալութեան շարունակուեց եւ շարունակւում է Դպրանոցի վերազարթօնքը: Վեհափառը, ունենալով մեծ աւանդ եւ ներդրում Դպրանոցի ստեղծման եւ կայացման գործում, շարունակում է իր հայրական յորդորներով եւ տնօրինութիւններով նոր շունչ եւ հոգի հաղորդել Դպրանոցի կրթական եւ հոգեւոր կեանքին: Արժանայիշատակ է 2000 թ. Թուակիր կոնդակի մէջ Ազգիս Վեհափառի ուղերձը. «Հայաստանի նոր անկախութեան հետ ծնունդ առաւ Վազգէնեան դպրանոցը, մեր ժողովրդի համար դժուարին, բայց յոյսով ու լաւատեսութեամբ, ազգային մեր իղձերի իրականացման խանդավառութեամբ լեցուն օրերին, երբ շրջափակման օղակն իր բոլոր ծանր հետեւանքներով աւելի ու աւելի սեղմւում էր Հայաստանի շուրջ, սակայն չէր կարող ու չկարողացաւ խեղդել հայրենի մեր եզերքներում թեւածող ազատութեան բաղձանքը, լռեցնել արդարութեան ձայնը եւ մեր նախնեաց կանչը»:

Այսօր էլ արդիական է հնչում Վեհափառի խօսքը, քանի որ դժուարին ժամանակշրջանում ենք գտնւում եւ Հայրենիքի Անկախութիւնը խարխլուած է ու վիրաւոր: Սակայն հայրապետական պատգամի համաձայն պէտք է «յոյսով ու լաւատեսութեամբ» զինուենք, որպէսզի թշնամին չկարողանայ «լռեցնել արդարութեան ձայնը եւ մեր նախնեաց կանչը»: Եւ այսօր էլ Դպրանոցը, հաւատարիմ մնալով իր սրբազան առաքելութեանը, շարունակում է կոփել ու կրթել խանդավառ, նուիրեալ եւ հայրենասէր ճեմարանականներին, որոնք վաղը պէտք է լրացնեն մեր զինուորեալ հոգեւորականաց դասը: Դպրանոցի սաներն իրենց մշտավառ աղօթքներով գրկում են սահմանին կանգնած իրենց զինուոր եղբայրներին եւ աղօթում Հայրենիքի անսասանութեան, խաղաղութեան, շէնացման եւ զօրացման համար:

Վազգէնեան Հոգեւոր Դպրանոցը՝ հոգու եւ մտքի դարբնոցը, Սեւանայ կղզեակի մարգարիտն է, համայն հայութեան հոգեւոր-կրթական մշտավառ փարոսն է՝ վեր խոյացած Թերակղզու բազմադարեան մենաստանի շուրջ, եւ շարունակում է լուսաւորել ու առաջնորդել հայութեանը՝ ուղենշելով յաւիտենական կեանքի ճանապարհը, որով ընթանալու ենք՝ փառուելու աստուածգիտութեան Լոյսի եւ Յարութեան խորհրդին:

Բարեշնորհ Եղիշէ սարկաւագ Սարգսեան
Գործավար-քարտուղար եւ դասախօս Վազգէնեան Հոգեւոր դպրանոցի

# Դարձեալ Մեր Ցաւին Մասին

Շարունակուած էջ 8-էն

այս ազգային ախտը գլխաւոր պատճառներէն մին է դարերու ընթացքին մեր »փոքր ածու« մնալուն: Վերյիշման համար, նշենք միայն մի քանի գլխաւոր օրինակներ: Արշակունեաց հարստութեան (66-428թ) վերջին ութը թագաւորներէն վեցն բնական մահով չաւարտեցին իրենց իշխանութիւնը, զոհ երթալով ներքին դաւադրութեանց (սպաննութիւն, գերեվարում, կուրացում, գահընկեցութիւն): Դաւիթ Բէկի եւ Մխիթար Սպարապետի առաջնորդած ազատագրական պայքարը 18րդ դարու սկիզբին, վիժեցուեցաւ ներքին դաւադրութիւնով երկրորդի սպաննութեամբ: Եթէ չէք ուզեր շատ հեռուն երթալ, ապա նկատի ունեցէք Հոկտ. 27, 1999-ի Ազգային Ժողովի սպանդը, որ գլխատեց մեր նորանկախ պետականութիւնը: Նոյնիսկ մեր աչքին առջեւ կատարուած այս վերջին դաւադրութիւնը դաս չէ եղած մեզի համար: Ինչո՞ւ: Որովհետեւ մեր մէջէն գտնուած են պատեհապաշտ, փառամոլ եւ մեծամիտ մարդիկ, որոնք իրենց գձուձ հաշիւներուն համար գործիք դարձած են օտարին ու ոտնակոխած մեր ազգային շահերը: 44-օրեայ պատերազմը անգամ մը համար եւս բացայայտեց այդ ախտը: Ցաւալին հոն է, որ այդպիսիք չեն արժանանար համազգային պախարակման, առիթը տալով նորերու յայտման: Անոր համար է, որ ըստ Խորենացիին, մեզի կը տիրեն չարսիրտ թագաւորներ: Ցաւալին հոն է նաեւ, որ մեզի կը պակսի հարցերը առարկայականօրէն քննելու եւ ըստ այնմ որոշումներու յանգելու բարձր մշակոյթը: Փոխարէնը՝ առատ է հայհոյախօսութիւնն ու ցեխարձակումը: Այդպէս վարուողները չե՞ն անդրադառնար, որ պարզապէս իրենց անձը վարկաբեկած կ՚ըլլան, ոչ թէ ան, որուն հասցէին կ՚ուղղեն իրենց խօսքը: Արդեօ՞ք այս է մեր իրական պատկերը: Ճոռոմօրէն կը ճառենք հին ազգ մը ըլլալու, բացառիկ շնորհներ ունենալու եւ աշխարհի քաղաքակրթութեան բազում նպաստներ բերած ըլլալու խօսքերով, բայց չենք կրնար զիրար հանդուրժել եւ համազգային ջանքերու մեկտեղումով մեր պետականութիւնը հզօրացնել:

Դժբախտաբար այդ է մեր ազգի գերիշխող պատկերը: Բայց այս տգեղ եւ տխուր իրավիճակին մէջ մենք կը տեսնենք նաեւ գեղեցիկն ու վեհը, յանձինս մեր բանակի զինուորներուն: Ամէն տեսակի առաւելութիւններ ունեցող թշնամի բանակին դէմ դիմադրողը եւ հակահարուած տուողը անպայմանօրէն վեհ ու քաջարի պէտք է ըլլայ: Ներկայ իրավիճակէն լաւագոյնս դուրս գալու համար մեր գլխաւոր յոյսը կը մնայ մեր բանակը, որուն հզօրացման պէտք է նպաստենք ազգովին, զայն օժտելով արդիական զէնքերով եւ հայրենասէր ու պատրաստուած հրամանատարներով: Երբ կը յաջողինք այդ ընել, վերագտած կ՚ըլլանք մեր արժանապատուութիւնը, որ խիստ վիրավորուած է: Միայն այդպիսով կրնանք դարմանել մեր ցաւը եւ հպարտօրէն տօնել մեր անկախութիւնը:

19 Սեպտեմբեր 2022

*****

Յ.Գ. Այս յօդուածը ընդարձակուած տարբերակն է Սեպտեմբեր 18-ին Կլէնտէյլի մէջ կայացած հաւաքի մեր ելոյթին:

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

# Ցեղասպանութիւնը Վերապրածի Մասին «Արշալոյսի Լուսաբացը» ֆիլմը Կ'առաջադրուի «Օսկար» Մրցանակաբաշխութեան



*Հայաստանի ազգային կ'ինոակադեմիան «Օսկար» 95-րդ մրցանակաբաշխութեան «լաւագոյն օտարալեզու ֆիլմ» անուանակարգին Հայաստանի կողմից առաջադրուելու համար ընտրել է ռեժիսոր Իննայ Սահակեանի «Արշալոյսի Լուսաբացը» վաւերագրական-անիմացիոն ֆիլմը:*

*«Արմէնփրես»-ի հաղորդմամբ՝ այս մասին հաղորդագրութիւն է հրապարակուել ֆիլմի «ֆեյսբուքի» պաշտօնական էջում:*

*«Այժմ, առաւել քան երբեւէ, կարեւոր է, որ Հայոց ցեղասպանութիւնը վերապրածների ձայները, ինչպէս Աւրորայինը, լսելի դառնան»,-ասւում է տեքստում:*

*Ֆիլմը ստեղծուել է Զօրեան ինստիտուտի գիտական աջակցութեամբ եւ Զօրեան ինստիտուտի՝ Հայոց ցեղասպանութեան բանաւոր պատմութեան արխիւի հիման վրայ:*

*«Արշալոյսի Լուսաբացը» ստեղծուել է «Փարս Մեդիա»-ի կողմից (Հայաստան), Gebruder Beetz Filmproduktion-ի (Գերմանիա) եւ Artbox Laisvalaikio Klubas (Լիտուա) հետ համատեղ արտադրութեամբ:*

*«Մենք շնորհակալութիւն ենք յայտնում Eurimages-ին, Հայաստանի Ազգային կինոկենտրոնին, Լիտուայի կ'ինոկենտրոնի, Arte/ZDF-ին, ինչպէս նաեւ բոլոր այլ ֆոնդերին, դրամաշնորհներին եւ հիմնադրամներին, ովքեր օգնել են այս ֆիլմի արտադրութեանը»,-նշուած է հաղորդագրութեան մէջ:*

*Ոչ միայն հանգամանքները, այլեւ ապրելու համար պայքարելու մեծ կամքն են Արշալոյս Մարտիկեանին (Աւրորա Մարտիկանեան) 1915 Թուականին փրկել Հայոց ցեղասպանութիւնից, հնարաւորութիւն տուել հաստատուել օտար երկրում եւ առաջ գնալ՝ յաղթահարելով բոլոր փորձութիւնները:*

*«Արշալոյսի Լուսաբացը» վաւերագրական-անիմացիոն ֆիլմը հետաքրքիր մանրամասներ է բացայայտում Աւրորայի մասին՝ լսարանին յորդորելով չյանձնուել ոչ մի պարագայում եւ փորձել ճիշտ կողմնորոշուել անգամ ամենադաժան իրավիճակներում:*

*Ֆիլմը, որի պրեմիերան կայացել է Ֆրանսիայում՝ Անսի միջազգային հեղինակաւոր անիմացիոն ֆիլմերի փառատօնում, ցուցադրուել է Երեւանի «Ոսկէ Ծիրան» միջազգային կինոփառատօնի շրջանակում, որն անցկացուել է 2022-ի յուլիսի 10-17-ը եւ արժանացել է արծաթէ ծիրանի:*

## ՄԱՀԱԶԴ



*ԼՈՒԹՖԻ ԹԱՊԱԳԵԱՆ (1941-2022)*

*Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր, մեծ հօր եւ եղբօր Լութֆի Թապագեանի մահը, որ պատահեցաւ Սեպտեմբեր 23, 2022-ին:*

*Թաղման արարողութիւնը պիտի կատարուի Հոկտեմբեր 4, 2022-ին, ժամը 1-ին Ս.Աստուածածին եկեղեցւոյ մէջ 500 S. Central Ave, Glendale, CA 91204, ապա թաղումը Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան մէջ, 6300 Forest Lawn Drive, Los Angeles CA 90068:*

*Սգակիրներ՝*

*Այրին՝ Տիկ. Մաթլէն Թապագեան*

*Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Սեւակ եւ Նարինէ Պետրոսեան*

*Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Մայք եւ Կարինէ Պէրպէրեան*

*Թոռնիկները՝ Նանօր, Սարին, Նարօտ, Նարեկ, Մհեր եւ Արէն*

*Քոյրը՝ Այրի Տիկ. Լուսին Պոյաճեան եւ զաւակունք (Պէյրութ)*

*Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Յարութ եւ Թագուհի Թապագեան եւ զաւակունք (Երեւան)*

*Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Աւետիս եւ Մարի Թապագեան եւ զաւակունք (Պէյրութ)*

*Քենեկալը՝ Տիար Յակոբ Պետրոսեան եւ զաւակունք (Երեւան)*

*Աներձագը՝ Տէր եւ Տիկ. Յարութ եւ Լուսին Ճաճռեան եւ զաւակունք*

*Աներձագը՝ Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Սոնա Ճաճռեան եւ զաւակունք (Հալէպ)*

*Քենին՝ Այրի Տիկ. Սեդա Սիսեռեան եւ զաւակունք (Վանքուվըր)*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ԼՈՒԹՖԻ ԹԱՊԱԳԵԱՆԻ մահուան տխուր առիթով մեր խորին վշտակցութիւնները կը յայտնենք հանգուցեալի այրիին, դուստրերուն եւ «Նոր Օր» շաբաթաթերթի խմբագրական կազմին:*

*«Մասիս»*

## Բեթէլ Վարժարանէն Ներս

Շարունակուած էջ 16-էն

*ըլլար արդէն շարքէն դուրս կը մնայինք եւ այսպէս մինչեւ դասարանին «Ախոյեան» մը մնալը...*

*Հայերէն դասերէն մասնաւորաբար կը յիշեմ մեր ծանօթութիւնը Համաստեղին ԱՆՁԻՐԵԻ-ն ու ՄԻՋՈՆ, ՀԱՅՈՒ ՀՈԳԻՆ: Այդ օրերուն, բնական համակարգիչի չգոյութեան մեր ծանօթութիւնը ամենանոր գրական երկերու ծանօթութեան կամ ժամանակի գրական նորութիւններուն ՆԱՅԻՐԻ եւ ՍՓԻՒՌՔ շաբաթաթերթերն էին:*

*Քեռիիս տունէն ՆԱՅԻՐԻ եւ ՍՓԻՒՌՔ շաբաթաթերթերէն քաղուած գրութիւնները կամ բանաստեղծութիւնները կը բերէի Օրդ. Ֆերիտէին ցոյց տալու: Ինչ որ ինծի համար նոր պարտականութեան մը դուռը բացաւ: Օր մըն ալ Օրդ. Ֆերիտէն բաւական հաստ տետրակ մը ձեռքս տուաւ, որ տուն տանելով սկսիմ իր նշանակած ընտրովի բանաստեղծութիւնները ընդօրինակել այդ տետրակին մէջ, համակարգիչի կամ պատճէնահանման գործիքներու բացակայութեան: Մեծ հաճոյք ու բաւարարութիւն կու տային ինծի այդ պահերը, առանձնանալով կարելի բծախնդրութեամբ ընդօրինակելու, վերնագիրները զարդարելու, որուն անշուշտ կ'աւելնար ձեռագիրիս կապակցութեամբ ուսուցչուհիիս գնահատանքն ու գովասանքը:*

*Ամավերջի հանդէսին Թելադրեց որ սովորական «Հուսք Բանք» գրելու փոխարէն ուրիշ մօտեցում ունենամ.. .. բայց բոլորովին նոր մօտեցումով: Իր հարցումին թէ ինչ կ'ուզեմ ըլլալ ըսի՝*

*-Լեզուագէտ-լեզուաբան ըլլալ կ'ուզեմ եւ շատ երկիրներ այցելել:*

*Զարմացած դէմքս դիտեց պատասխանիս տարօրինակութեան եւ աչքերուս մէջ շեշտակի նայելով հարցուց-*

*-Ինչո՞ւ -*

*Հարցումին պատասխան չկրցայ տալ անմիջապէս: Ես ալ մինչեւ հիմա կը զարմանամ թէ ինչը գլխ մղեց այդ պատասխանը տալու: Երէց եղբայրս Լիբանան Անթիլիաս-Դպրեւանք գացած էր ուսանելու եւ պաշտօնով Միացեալ Նահանգներ մեկնելու խօսքեր կային: Ես այնքան կարօտցած էի գինք որ եթէ բերանս բանայի գիտէի որ կրնար լացի փոխուիլ- փոխարէնը ինքզինքս զսպելով պատասխանեցի-*

*-Ամէն մէկ դասընկերս երկիր մը կ'ուզէ երթալ, ուսանիլ, կ'երթամ գիրենք կը գտնեմ, թէ՝ այդ երկրին լեզուն կ'ուսումնասիրեմ եւ թէ ընկերներս կը տեսնեմ:*

*Ակնոցին ետեւէն կրկին շեշտակի աչքերուս մէջ նայելով ըսաւ...*

*-Լաւ գաղափար է, գնա՝ դասընկերներդ ուրիշ երկիրներու մէջ մասնագէտ դարձած գտիր, վստահ եմ դասընկերներուդ ծնողներն ալ հաճոյքով պիտի լսեն քու պատկերացուցած հասուն դասընկերներուդ մասին:*

*Հիմա տասնամեակներու մշուշին մէջէն հազիւ մի քանի հոգիին մասին գրածներս կը յիշեմ, մին երկրաչափ էր, միւսը բժիշկ, հիւանդապահուհի, դասախօս, ուսուցիչ՝ Օրդ. Ֆերիտէին պէս... եւլն: Կրկնօրինակ պահելու կարելիութիւն չունեցայ, բնագիրն ալ Օրդ. Ֆերիտէն ուզեց իր քով պահել- չեմ յիշեր ուրիշ ինչեր գրած էի, բայց կարծես օրին հանդիսատես ծնողներն ալ գոհ մնացեր էին:*

*Բեթէլ Վարժարանի նախակրթարանէն ամբարած պաշարս օգնեց որ ՀԲԸՄ-ի Լ.Ն-Գ.Կ. Կեդրոնական վարժարանի եօթերորդ դասարանը շրջանցելով, «ցատկելով», միջնակարգը սկսիլ ութերորդ դասարանէն շնորհիւ մուտքի քննութեան փայլուն արդիւնքին:*

*Ազէզի Սահակեան Վարժարանէն ամբարած Հայերէնի պաշարս ու Հալէպի Բեթէլ Աւետարանական Վարժարանէն ներս հոգատար մանկավարժներու հսկողութեամբ երկու տարուայ ինքզինքս արդարացնելու տքնաջան եւ չարաչար աշխատանքս իր բարերար արդիւնքին հասած էր:*

*Մշակոյթի ամսուայ առթիւ, հոկտեմբերեան այս օրերուն ողջո՛յն Բեթէլ Աւետարանական Վարժարանի 100-ամեակին ընդառաջ, յարգանք՝ Տնօրէն Լութֆի Հայտօսթեանին յիշատակին, Տնօրէնը՝ որ անդրդուելի մնաց իր որոշումին եւ ապա հոգեբանական մօտեցումով կատարեց իր խոստումը: Յարգանքս յաջորդ տարի գինք փոխարինող տնօրէն՝ Մովսէս Ապաճեանին, ինչպէս նաեւ նուիրեալ մանկավարժ-ուսուցիչներու հոյլին՝ Կատարինէ Սեմերճեանին, Ռոզա Վարպետեանին, Յովսէփ Եագուպեանին, Ֆերիտէ Սալիպեանին:*

www.massisweekly.com




## Ազգերու Լիկա. Ֆրանսան Պարտուեցաւ Դանիային, Խորուաթիան ու Հոլանտան Փլեյ-Օֆֆի Հասան

*Ազգերու Լիկայի A լիկայի վերջին հանդրուանին աշխարհի ախոյեան Ֆրանսայի հաւաքականը հիւրընկալեց դանիացիներուն եւ պարտութիւն կրեց 0:2 արդիւնքով:*

*Առաջին խումբին մէջ Ֆրանսան 5 կէտով գրաւեց նախավերջին տեղը, Դանիան երկրորդն է՝ 12 կէտ: Խումբի յաղթող դարձաւ եւ փլեյ-օֆֆի ուղեգիր նուաճեց աշխարհի փոխախոյեան Խորուաթիան, որ վերջին հանդրուանին 3:1 արդիւնքով յաղթեց աւստրիացիներուն եւ վաստակեցաւ 13 կէտ: Աւստրիան 4 կէտով գրաւեց վերջին տեղը եւ նահանջեց B լիկա:*

*A լիկայի չորրորդ խումբին Հոլանտայի հաւաքականը նուազագոյն արդիւնքով առաւելութեան հասաւ Պելճիգայի նկատմամբ եւ 16 կէտով գրաւեց առաջին տեղը՝ նուաճելով փլեյ-օֆֆի ուղեգիր: Պելճիգան 10 կէտով երկրորդն է:*

## Փորթուկալ Յաղթեց Չեխիային, Զուիցերիան՝ Սպանիային

*Ազգերու Լիկայի A լիկայի երկրորդ խումբի նախավերջին հանդրուանին Փորթուկալի հաւաքականը հիւրընկալեց չեխերուն եւ առաւելութեան հասաւ 4:0 արդիւնքով:*

*Նոյն խումբին մէջ Սպանիոյ հաւաքականը ընդունեց զուիցերիացիներուն եւ պարտութիւն կրեց 1:2 արդիւնքով:*

*Փորթուկալ 10 կէտով կը գլխաւորէ երկրորդ խումբի մրցաշարային աղիւսակը եւ 2 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող Սպանիայէն: Զուիցերիան երրորդն է՝ 6 կէտ, Չեխիան վերջինն է՝ 4 կէտ:*

## Գերմանիան Անակնկալ Պարտութիւն Կրեց, Իտալիան Յաղթեց Անգլիային

*Ֆութպոլի Ազգերու Լիկայի A լիկայի երրորդ խմբակի նախավերջին հանդրուանին անակնկալ պարտութիւն կրեց Գերմանիոյ հաւաքականը: Ընդունելով Հունկարիայի հաւաքականին պարտութիւն կրեց նուազագոյն՝ 0:1 արդիւնքով:*

*Հունկարիայի հաւաքականը 10 կէտով խմբակի առաջատարն է: 2 կէտ ետ է Եւրոպայի ախոյեան Իտալիոյ հաւաքականը, որ 1:0 արդիւնքով պարտութեան մատնեց Անգլիային:*

*Գերմանիան 6 կէտով Երրորդն է, Անգլիան Վերջինն է՝ 2 կէտ: Հունկարիան ու Իտալիան վերջին հանդրուանին կը վիճարկեն առաջին տեղն ու փլեյ-օֆֆի ուղեգիրը, իսկ Անգլիան նահանջեց B լիկա:*

## Պոսնիացիները Յաղթեցին եւ Նուաճեցին A Լիկայի Ուղեգիր

*Ֆութպոլի Ազգերու Լիկայի B լիկայի երրորդ խմբակի նախավերջին հանդրուանին Պոսնիա-Հերցեգովինայի հաւաքականը սեփական դաշտին վրայ մրցեցաւ Մոնթենեկրոյի հաւաքականին հետ եւ յաղթեց նուազագոյն արդիւնքով:*

*Պոսնիացիները 11 կէտով գրաւեցին խմբակի առաջին տեղը եւ յաջորդ մրցաշրջանին հանդէս կու գան A լիկայի մէջ: Մոնթենեկրոն 7 կէտով երկրորդն է:*

*Խմբակի միւս խաղին Ֆինլանտայի եւ Ռումինիոյ հաւաքականները խաղցան հաւասար՝ 1:1:*

*Ֆինլանտան 5 կէտով երրորդն է, Ռումինիան վերջինն է՝ 4 կէտ:*

## «Պարսելոնան» Մտադիր է Վերադարձնել Լիոնել Մեսիին

*«Պարսելոնան մտադիր է յաջորդ ամրան վերադարձնել արժէնթինցի յարձակող Լիոնել Մեսիին: 35-ամեայ ֆութպոլիստի պայմանագիրը Ֆրանսայի ախոյեան ՊՍԺ-ի հետ նախատեսուած է մինչեւ այս մրցաշրջանի աւարտը:*

*Ցունուարին գաթալոնական ակումբի ղեկավարութիւնը պաշտօնապէս բանակցութիւններ կը սկսի Մեսիի հետ, կը հաղորդէ Mundo Deportivo-ն: «Պարսելոնայի» սպանացի գլխաւոր մարզիչ Զաւին կը ցանկայ աշխատիլ նախկին խմբակիցի հետ:*

*«Պարսելոնայի» մէջ վստահ են, որ Մեսին կը համաձայնի աշխատավարձի նուազման եւ չի պահանջեր մշտական տեղ հիմնական կազմի մէջ:*

## Ազգերու Լիկա. Հայաստանի Պարտութիւնը Ուքրանիոյ Եւ Իռլանտայի Դէմ




*Ֆութպոլի Ազգերու Լիկայի խմբային փուլի վերջին հանդրուանին Հայաստանի հաւաքականը կրեց երկու յաջորդական պարտութիւն: Երեւանի Վազգէն Սարգսեանի անուան «Հանրապետական» մարզադաշտին մէջ ընդունեց Ուքրանիոյ հաւաքականին եւ պարտուեցաւ 0:5 արդիւնքով:*

*Խումբերու առաջին խաղին Ուքրանիոյ հաւաքականը յաղթած էր 3:0 արդիւնքով:*

*Սեպտեմբեր 27-ին, Տապլինի մէջ մրցելով Իռլանտայի դէմ Հայաստան դարձեալ պարտութիուն կրեց՝ 3-2 արդիւնքով:*

*B դասակարգի առաջին խմբակին մէջ Հայաստան 3 կէտով գրաւեց վերջին տեղը եւ յաջորդ շրջանին հանդէս կու գայ C դասակարգի մէջ:*

*Խմբակը 13 կէտով գլխաւորեց Սկովտիան, որուն յաջորդեց Ուքրանինան՝ 11 կէտ:*

## ՄՕԿ-ն Անհանգստացած է IBA-ի Երեւանեան Գոնկրեսի Որոշումով



*Միջազգային Ողիմպիական Կոմիտէն անհանգստացած է Բռնցքամարտի Միջազգային Ընկերակցութեան (IBA) երեւանեան արտահերթ գոնկրէսի որոշումով: Կազմակերպութեան նախագահի նոր ընտրութիւն կատարելու դէմ էին եւ քուէարկել 106 մասնակիցները, կողմ՝ 36:*

*Այդ քուէարկութեան շնորհիւ IBA-ի ռուս նախագահ Ումար Կրեմլիովը եւս չորս տարի կը ղեկավարէ սիրողական բռնցքամարտի միջազգային ընկերութիւնը:*

*ՄՕԿ-ը նաեւ դժգոհ է, որ գոնկրէսէն քանի մը օր առաջ վիճահարոյց մեղադրանքներու հիման վրայ կանգնեցուած է Ուքրաինոյ բռնցքամարտի ընկերութեան անդամակցումը IBA-ին:*

*ՄՕԿ-ը երեւանեան գոնկրէսի որոշումը կը քննարկէ գործկոմի յառաջիկայ նիստին:*

*2019 թուականէն ՄՕԿ-ը Բռնցքամարտի միջազգային ընկերութեան ղեկավարութենէն կը պահանջուի իրագործել բարեփոխումներ: IBA-ն զրկուած է 2024թ. Փարիզի Ողիմպիական խաղերու բռցնքամարտի մրցաշարի կազմակերպումէն:*

## Ֆեդերերը Կատարեց Վերջին Հանդիպումը Իր Արհեստավարժ Ասպարէզին

*Զուիցերիացի Ռոճըր Ֆետերերը Կատարեց Իր Վերջին Հանդիպումը իր արհեստավարժ ասպարէզի ընթացքին:*

*Լոնտոնի մէջ տեղի ունեցող «Լէյվըրի» գաւաթի խաղարկութեան Ֆետերերը զուգախաղին ընկերակցեցաւ սպանացի Ռաֆայէլ Նատալին: Անոնք Եւրոպայի հաւաքականի կազմին մէջ մրցեցան ամերիկացիներ Ֆրենսիս Տիաֆոյի եւ Ջէք Սոքի հետ եւ պարտուեցան 6:4, 6:7 (2:7), 9:11 հաշուով:*

*«Մեծ սաղաւարտի» մրցաշարի 20-ակի ախոյեանը յայտարարած էր, որ «Լէյվըրի» գաւաթի խաղարկութենէն յետոյ կ՝աւարտէ իր արհեստավարժ ասպարէզը:*

*41-ամեայ թենիսիստը խաղէն յետոյ արտասուած է դաշտին մէջ: Անոր հետ դաշտին մէջ եղած են նաեւ կին ու երեխաները:*